Մայիսի 6-ին մասնակցենք քվեարկությանը:
Հանրապետության ապագան կախված է յուրաքանչյուրիս ձայնից:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ից

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը 100 դրամ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ 3 ՄԱՅԻՍԻ 2012Թ • № 12 (253)

www.syuniacyerkir.am

Ու խաբեության հարսանիք եղավ...
ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

ՀԱԿ-ը համակարգային փոփոխություններ է առաջարկում

ՀԱԿ-ի կապանյան հանրահավաքի մասին՝ 2-րդ էջում:

Կարեւորվել է ընտրությունների արդար անցկացումը

ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Եռօրյա այցով Սյունիքի մարզում էր Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը՝ կնոջ՝ Լիբբի Հեֆերնի եւ դեսպանության աշխատակիցների հետ: Ապրիլի 28-ին Սյունիքի մարզային գրադարանի ամերիկյան կենտրոնում դեսպանն ամփոփեց եռօրյա այցի արդյունքները: Նախ նշենք, որ լսարանը հիմնականում բաղկացած էր դպրոցականներից եւ Խաղաղության կորպուսի ամերիկացի կամավորներից: Գուցե դա էր պատճառը, որ Ջ.Հեֆերնն ասաց, որ ներածական խոսքում չի անդրադառնալու հայ-ամերիկյան, թուրք-ամերիկյան, հայոց ցեղասպանության խնդիրներին, այլ անկեղծ զրույց է ունենալու ներկաների հետ եւ պատասխանելու նրանց հարցերին: Դեսպանը Սյունիքի մարզ կատարած իր անդրանիկ այցի համատեքստում կարեւորեց երեք ուղղություն՝ հանդիպում գործընկերների հետ (նկատի ուներ դեսպանատան հետ համագործակցողներին), այցելություն այն վայրեր, որտեղ ամերիկյան կառավարության միջոցով ծրագրեր են իրականացվում եւ ծանոթություն Ազգային ժողովի ընտրությունների քարոզարշավի ընթացքին:

Ի դեպ, ամերիկյան կենտրոնում հանդիպումը նախատեսված ժամանակից ուշ սկսվեց: Դեսպանը մի կարճ ժամանակով մասնակցեց Կապանի մշակույթի կենտրոնի հրապարակում անցկացվող «Հայ ազգային կոնգրես» դաշինքի հանրահավաքին, քանի որ մինչ այդ դաշինքի ներկայացուցիչների եւ պատգամավորության թեկնածուների հետ առիթ չէր ունեցել հանդիպելու:

Անդրադառնալով առաջիկա խորհրդարանական ընտրություններին՝ դիվանագետը նշեց, որ դրանց արդար, թափանցիկ եւ ազատ անցկացումը կարեւորվում է Հայաստանի՝ ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի հետ հարաբերվելու առումով եւ փորձեց կատակել, ասելով, որ վստահ է՝ մայիսի 6-ին 18 տարեկանը լրացած անձինք կգնան քվեարկելու եւ կքվեարկեն միայն մի անգամ:

«Սյունյաց երկիրը» իր հարցն ուղղեց դեսպանին. **«Մինչեւ Հայաստան գալը, որեւէ բան գիտեի՞ք մեր երկրի մասին, եթե այո, ապա որեւէ բան փոխվե՞լ է Հայաստանի մասին ձեր պատկերացումներում»:**

Ջոն Հեֆերն, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան:

- Մինչեւ այստեղ պաշտոնավարելս, Հայաստանի մասին բան չգիտեի: Աշխատանքի բերումով նախկին Խորհրդային Միության երկրներով չեմ զբաղվել: Վաշինգտոնում զբաղվել եմ Հարավարեւելյան Ասիայի երկրների հետ կապված հարցերով: Մի կարճ ժամանակ աշխատել եմ ՆԱ-

Շարունակությունը՝ էջ 2

Հանրությունն արթնության նշաններ է ցույց տալիս

Իսկ իշխանությունը պահելու կամ իշխանության հասնելու բոլոր ձեւերը, կարծեք, թույլատրելի են ու արդարացված

ՀԱՅԱՑՔ ՍՅՈՒՆԻՔԻՑ

Ընտրողը մայիսի 6-ին դեռ կասի իր խոսքը: Տեղամասային, ընտրատարածքային եւ կենտրոնական ընտրական հանձնաժողովները դեռ կամփոփեն ընտրությունների արդյունքները. հիշո՞ւմ եք հայտնի բանաձեւումը՝ կարեւորը քվեարկելը չէ, այլ՝ քվեների հաշվումը: Մինչ այդ, սակայն, Աժ 2012թ. ընտրությունների նախապատրաստման կարեւորագույն եւս մեկ փուլը՝ նախընտրական քարոզարշավը մոտենում է եզրագծին, եւ կարելի է որոշ դատողություններ անել այդ մասին:

Նախ՝ քարոզարշավը քաղաքական ուժերի եւ պատգամավորության թեկնածուների քարոզ չէ սոսկ: Քարոզարշավն այն բացառիկ միջոցառումն է, որի ընթացքում պարզորոշ երեւում են մեր բարոյականությունը, մեր քաղաքացիությունը, հայրենիքի, երկրի, հանրապետության, ազգային արժեքների մասին մեր պատկերացումները, գաղափարների ու գաղափարախոսությունների իրական բովանդակությունը, մարդկային հարաբերությունների ներկա վիճակը, իշխանավորների, քաղաքական լիդերների, քաղաքական ուժերի, քաղաքականություն մտնել ձգտողների անշպար դեմքերը:

Գլխավոր տպավորությունը, որ ստացանք, հետեւյալն է՝ հասարակությունն արթնության նշաններ է ցույց տալիս, չնայած մատուցված նախընտրական ծրագրերի, գաղափարների մեծ մասն աչքի է ընկնում դատարկությամբ, նորության, թարմության բացակայությամբ:

Ընտրողների զգալի մասի կարծիքով տեղի ունեցող այս իրադարձությունն իշխանությունը պահելու կամ իշխանության հասնելու կատաղի պայքար է, որի ընթացքում, որքան էլ զարմանալի է, մարտավարական բոլոր ձեւերը թույլատրելի են ու արդարացված:

Ընտրողների մի մասն էլ, ցավոք, շարունակում է ուշադրություն չդարձնել քաղաքական ուժերի, պատգամավորության թեկնածուների նախընտրական ծրագրերին: Որոշիչը, կարծեք, ոչ թե ծրագրերն են, այլ՝ ուրիշ հանգամանքներ ու գործոններ:

Հաջորդը՝ Հանրապետականը, եթե նույնիսկ 5-րդ գումարման Աժ-ում հրաշքով գրանցի սահմանադրական (որակյալ) մեծամասնություն, այլեւս զրկված է քաղաքական մենաշնորհից: Հանրապետականին քաղաքական մենաշնորհից զրկելու պատիվը, աներկբա կերպով, պատկանում է Լեւոն

Շարունակությունը՝ էջ 6

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱԶԱՏԱՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

ՀԱԿ-ը համակարգային փոփոխություններ է առաջարկում

ՔԱՐՈՋԱՐՇԱՎ

Ապրիլի 26-ին եւ 27-ին Սյունիքում էին Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչները: Առաջին հանդիպումը, որն աչքի է ընկել իր բազմամարդությամբ, տեղի է ունեցել Սիսիանում: ՀՀ առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը ելույթ է ունեցել, որն արժանացել է հավաքի մասնակիցների հավանությանը: Այլ պատկեր է դիտվել Գորիսում, որտեղ հանդիպումն այնքան էլ բազմամարդ չի եղել, սակայն բնակիչների մի մասի հետաքրքրությունը հավաքի նկատմամբ ստիպել է նրանց դուրս գալ պատշգամբ եւ հետեւել ՀԱԿ առաջնորդի ելույթին: Գորիսից հետո նրանք մեկնել են Մեղրի եւ Կապան, սակայն առանց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, քանի որ նա ճնշման տատանումների պատճառով առողջական խնդիր է ունեցել եւ բժիշկների խորհրդով վերադարձել Երեւան: ՀԱԿ-ի հանրահավաքը Կապանում տեղի ունեցավ ապրիլի 27-ին՝ մշակույթի կենտրոնի բակում: Չնայած տեղացող անձրեւին՝ հանդիպմանը ներկա էր 300-ից ավելի մարդ: Այդտեղ էին «Հայաստանի ժողովրդական կուսակցության» նախագահ Ստեփան Դեմիրճյանը, ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը, նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանը, N38 ընտրատարածքում մեծամասնականով պատգամավորության թեկնածու Դավիթ Մաթեւոսյանը: Բացման խոսքով հանդես եկավ ՀԺԿ վարչության քարտուղար, Մեղրու շրջգործկոմի նախկին նախագահ Գրիգոր Հարությունյանը. **«Երկրում տիրում է մի իրավիճակ, որը նման է 1937 թվականին, հիմա, ինչպես այն ժամանակ, մարդիկ ենթարկվում են ճնշումների, նրանց սպառնում են գործազրկությամբ»:** Ապա ելույթ ունեցավ Սյունիքի նախկին մարզպետ, ՋՊՄԿ-ի նախկին տնօրեն Ռոման Նավասարդյանը: Նա խոսեց երկրում տեղի ունեցող արտագաղթի պատճառներից, ինչպես նաեւ փոքր եւ միջին բիզնեսում եղած բացթողումների, աղքատության աճի մասին: **«Այս ամենը երկար չի կարող շարունակվել: Սյունիքի ընդերքը հարուստ է, բայց այդ հարստության եւ արդյունաբերություն ունենալու դեպքում մարզի բնակիչների վիճակը չի բարելավվում: Գյուղերը դատարկվում են հետզհետե, եթե աշակերտների թիվը Սյունիքում 2000 թվականին եղել է 29 հազար, ապա այս տարի այդ թիվը հասել է 17 հազարի: Այսպես երկար չենք կարող գոյատեւել, այս պայմաններում զարգացման մասին խոսք անգամ չի կարող լինել»,** – ասաց Ռ.Նավասարդյանը: Նա կոչ արեց կապանցիներին՝ ակտիվ մասնակցություն ունենալ մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ընտրություններին: Դավիթ Մաթեւոսյանն էլ, շնորհակալություն հայտնելով ներկաներին, ասաց. **«Հարգելի՛ կապանցիներ, դուք այս տարածաշրջանի համարձակության մերանն եք, հավատացած եմ, որ ձեր մասնակցությամբ մեր երկրում իրավիճակի փոփոխություն տեղի կունենա: Քարոզարշավի ողջ ընթացքում շրջել եմ N38 ընտրատարածքն ընդգրկող Մեղրու եւ Կապանի շրջաններում ու հանդիպել մարդկանց հետ: Մարզում տիրող իրավիճակի մասին չեմ ուզում երկար խոսել, որովհետեւ ինքներդ էլ գիտեք, թե իրավիճակն ինչպիսին է, սակայն մի բան կարելի է հստակ ասել, որ գյուղացին երես է թեքել հողից, իսկ քաղաքը՝ կիսով չափ դատարկվել: Իշխող կուսակցությունը համաճարակ է, որ ամենուր տարածվում է, եւ որից պետք է ձերբազատվել: Երկրում տեղի է ունենում վարչական ռեսուրսի չարաշահում, մարդկանց սպառնում են աշխատանքի կորստով, ճնշում գործադրում պետական հիմնարկություններում աշխատողների վրա: Կոչ եմ անում ձեր ձայնը չտալ Հանրապետական կուսակցությանը, այլապես երկրի վիճակն ավելի կվատանա, արտագաղթը կշարունակվի»:** Նա նաեւ հորդորեց մասնակցել ընտրություններին, քվեարկել Հայ ազգային կոնգրեսի օգտին: Ելույթ ունեցավ նաեւ Գագիկ Ջհանգիրյանը, ով մասնավորապես ասաց. **«Հարգելի՛ կապանցիներ, Հայ ազգային կոնգրեսը չորս տարի է՝ պայքարում է այս հանցավոր վարչախմբի դեմ: Մենք ձեզ հետ միասին ամեն ինչ արել ենք արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու համար, ինչը, ցավոք, մեզ չհաջողվեց, բայց այժմ միասին կարող ենք փոխել այս իշխանություններին: Դա հնարավոր է անել երկու փուլով: Նախ պետք է մայիսի 6-ին Հանրապետական կուսակցությանը զրկել քաղաքական մենաշնորհից, որպեսզի նրանք ԱԺ-ում մեծամասնություն չկազմեն, որից հետո՝ նախագահական ընտրություններին իշխանափոփոխություն կատարելը կդառնա ավելի իրատեսական»:** Նա նաեւ խոսեց զգալի ծավալների հասնող արտագաղթի, բանակ զորակոչվող զինվորների թվի նվազման, արդարության բացակայության, ժողովրդի անպաշտպանության մասին: **«Այսօր մեր երկրում տուժողները դառնում են մեղադրյալ, իսկ մեղադրյալները՝ տուժող»,** – իր խոսքը եզրափակեց Գ.Ջհանգիրյանը: ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը պարզաբանեց, թե ինչու պետք է չընտրել ՀՀԿ-ին: Նա կետ առ կետ կարդաց ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը՝ նախորդ խորհրդարանական ընտրությունների առիթով ներկայացրած, եւ հարցրեց հավաքի մասնակիցներին՝ արդյո՞ք դրանք ի կատար են ածվել: Հ.Բագրատյանն անդրադարձավ ծնելիության թվի նվազմանը եւ մահացությունների թվի ավելացմանը, ինքնասպանությունների թվին, որը եւս բազմապատկվել է: **«Մայիսի 6-ը պետք է լինի ՀՀԿ-ի մենիշխանության վերացման օրը: Եթե ծանրակշիռ ներկայություն ապահովենք Ազգային Ժողովում, մեր առաջին քայլը լինելու է այն մարդկանց պատժելը, ովքեր իրենց խոստումները չեն կատարել: Ինչ վերաբերում է պատճառաբանություններին, թե երկրում տնտեսական ճգնաժամ է եղել, ապա ասեմ, որ դա ամբողջ աշխարհում տեւել է ընդամենը մեկ տարի, իսկ մնացած տարիներին եւ այսօր՝ «աշխարհում տնտեսական ճգնաժամ է» ասողների գլխներում եւ հոգիներում»,** – ասաց Հ.Բագրատյանը: Ստեփան Դեմիրճյանը նույնպես հորդորեց քվեարկել Դավիթ Մաթեւոսյանի եւ Հայ ազգային կոնգրեսի օգտին:

Նույն օրը ՀԱԿ-ի ներկայացուցիչները եղել էին Մեղրիում եւ քաղաքի կենտրոնական հրապարակում հանդիպել մեղրեցիների հետ:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀՀԿ նախընտրական վերջին հավաքը Կապանում

®

ՔԱՐՈՋԱՐՇԱՎ

Մայիսի 2-ին մարզկենտրոնի Գ.Նժդեհի անվան հրապարակում տեղի ունեցավ ՀՀԿ-ի սյունիքյան շտաբի նախաձեռնած վերջին հանրահավաքը, որտեղ ելույթ ունեցան Սյունիքի մարզպետ, ՀՀԿ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանը եւ N38 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Վահե Հակոբյանը: Սուրեն Խաչատրյանի ելույթը՝ ստորեւ:

Սիրելի՛ հայրենակիցներ

Ավարտվում է Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման ամենակարեւոր փուլերից մեկը՝ նախընտրական քարոզարշավը:

Որպես Սյունիքի մարզպետ՝ ուզում եմ ձեզ տեղյակ պահել, որ նախընտրական քարոզարշավը մարզում անցել է ընտրողների, ինչպես եւ քաղաքական ուժերի ու պատգամավորության թեկնածուների ակտիվության պայմաններում: Բոլորն իրենց ծրագրերը ներկայացնելու, նախընտրական շտաբների գործունեությունը կազմակերպելու լիարժեք հնարավորություն են ունեցել: Սյունիքի մարզպետարանը, համայնքային իշխանություններն ու իրավապահ մարմիններն արել են եւ կանեն օրենքով սահմանված ամեն ինչ, որպեսզի ընտրությունները մարզում անցնեն օրինականության, արդարության հունով:

Բարեկամնե՛ր

Այսօր ձեր առջեւ հանդես եմ գալիս ոչ միայն որպես Սյունիքի մարզպետ, այլեւ Հայաստանի հանրապետական կուսակցության մարզային խորհրդի նախագահ:

Անցած մեկ ամսում դուք հնարավորություն ունեցաք լսելու քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչներին: Հատկապես սոցիալական ոլորտում շատերը ձեզ ոսկե սարեր խոստացան ու ոչինչ չխնայեցին մեր կյանքում տեղ գտած բացթողումները մատնանշելու եւ Հանրապետականին քարկոծելու համար: Անցած մոտ տասը տարում քաղաքական կոալիցիայի մաս կազմած ուժերն անգամ արիություն չունեցան խոստովանելու, որ առկա թերությունների համար նաեւ իրենք են պատասխանատու:

Մենք քննադատությունից չենք վախենում, մենք թերություններն ու բացթողումները չենք կոծկում: Բայց քննադատությամբ զբաղվողները պետք է գոնե տեսնեին, թե միայն վերջին տարիներին Հանրապետականի ջանքով ինչպիսի մեծածավալ վերափոխություններ են կատարվել մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, չնայած դեռ բազմաթիվ խնդիրներ կան չլուծված:

Ամբոխավարությունն այնքան խորությամբ էր նստած որոշ քարոզիչների մեջ, որ սյունիքյան հանդիպումներում տեղի-անտեղի բացականչում էին. «Մենք տեր ենք յուրաքանչյուրիդ ձայնին»: Ստիպված եմ հակադարձել՝ պարոնայք, սյունեցին առանց ձեզ էլ տեր է իր արժանապատվությանը:

Որոշ թեկնածուներ կամ ուժեր փորձեցին իրենց ձախողված կամ մերժված լինելու համար մեղավոր հռչակել ՀՀԿ-ին կամ Սյունիքի մարզպետարանին, ինչը նույնպես ազնիվ չէ:

Այդուհանդերձ՝ մենք բոլորին համերաշխության, փոխըմբռնման եւ փոխադարձ վստահության կոչ ենք հղում: Մենք միեւնույն ճանապարհի ճամփորդն ենք, մենք մեր երկրի տերն ու ծառան ենք, եւ Ազգային ժողովի ընտրության օրինավոր անցկացումը բոլորիս ու յուրաքանչյուրիս պարտքն է:

Անցած տարիներին Հանրապետականի բոլոր գործողություններն ուղղված են եղել Հայաստանի Հանրապետության հզորացմանը, երկրի հիմնախնդիրների լուծմանը: Եվ միշտ էլ շիտակ, անկեղծ ու ազնիվ ենք եղել մարդկանց հանդեպ, փորձել օգտակար լինել յուրաքանչյուրին: Այնպես որ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունն այսօր ձեր առաջ կանգնած է պարզերես, պարտքի ու պատասխանատվության գիտակցումով, կանգնած է իբրեւ ձեզանից յուրաքանչյուրի բարեկամ ու գործընկեր:

Մեզ համար, քան որեւէ այլ ուժի, տեսանելի են երկրի առջեւ ծառացած բոլոր խնդիրները, հայ ժողովրդին նետված մարտահրավերները: Նաեւ տեսանելի են դրանց լուծման ու հաղթահարման ուղիները, ինչի համար եւ որդեգրել ենք արմատական փոփոխությունների ուղին՝ հավատալով ձեզանից յուրաքանչյուրին, հավատալով մեր ժողովրդի հավաքական ուժին:

Հպարտությամբ եմ ուզում նշել, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը գլխավորում է Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ Սերժ Սարգսյանը: Հանրապետության նախագահի պաշտոնում գտնվելու չորս տարվա ընթացքում ի հայտ եկան առաջնորդի, պետական ու քաղաքական գործչի, մեծ հայի ու հայրենասերի, լայնախոհ դիվանագետի եւ հմուտ զորապետի նրա անուրանալի արժանիքները: Քաղաքական, սոցիալ-տնտեսական դժվարագույն մեր օրերում նա կարողացավ երկրում ապահովել ներքաղաքական կայունություն, կարողացավ հանրապետությունը

Շարունակությունը՝ էջ 6

Սերժ Սարգսյանի զրույցը Քաջարանի գյուղապետի հետ

ՍԵՐՍ ԳԱՂՏՆԻ ԹՈՂ ՄՆԱ

Ապրիլի 16-ին Կապանի կենտրոնական հրապարակում ընտրողների հետ տեղի ունեցած հանդիպումից հետո Սերժ Սարգսյանին է մոտեցել Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աթայանը: Նրանց միջեւ տեղի է ունեցել հետեւյալ երկխոսությունը.

Ռաֆիկ Աթայան. Պարոն նախագահ, գյուղս քանդում են:

Սերժ Սարգսյան. Ոչ մեկը չի կարող գյուղդ քանդել, մեջքիդ կանգնած եմ: …Եթերից չես իջնում, ինչո՞ւ չես գալիս մոտս:

Ռաֆիկ Աթայան. Մի քանի անգամ եկել եմ, բայց չեմ կարողացել հանդիպել:

Սերժ Սարգսյան. Նորից արի, կընդունեմ: Դու էլ արի կողքիս կանգնի:

Ռաֆիկ Աթայան. Ամբողջ գյուղը Ձեզ հետ է: Կգամ հանդիպման, շատ բան ունեմ ասելու:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
17 ապրիլի 2012թ.

Կարեւորվել է ընտրությունների արդար անցկացումը

ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱՋՈՐ ԴԵՍՊԱՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Սկիզբը՝ էջ 1

ՏՕ-ի ԱՄՆ-ի ներկայացուցչությունում եւ շփվել Հայաստանի դիվանագետների հետ: Հայաստանը ՆԱՏՕ-ի համար կարեւոր գործընկեր էր, մեր խնդիրն այնտեղ այն էր, որ ուզում էինք Հայաստանն իր հայացքն ուղղի դեպի Եվրամիություն, դեպի ՆԱՏՕ: Երբ ես պատրաստվում էի Հայաստան գալ, նշանակումից առաջ երեք ամիս ժամանակ ունեի, եւ իմ ուշադրության կենտրոնում Հայաստանին առնչվող քաղաքական հարցերն էին: Հայաստանի մասին ընդհանրական պատկերացում չունեի: Իսկ այստեղ գտնվելով՝ արդեն որոշ բաներից զարմացած եմ: Երբ խոսում են Հայաստանից դուրս բնակվող հայերի մասին, ընդգծում են նրանց նախաձեռնող ջիղը, ձեռներեցությունը, նրանք շատ հաջողակ են բիզնեսում եւ արդյունավետ գործունեություն են ծավալում: Եվ ես մտածում էի՝ տեսնես Հայաստանում է՞լ են այդպես նախաձեռնող, պատրաստ բիզնես հիմնել, ընդառաջ գնալ մարտահրավերներին: Մինչեւ այստեղ գալս այս հարցերի վերաբերյալ հստակ պատասխան չունեի: Բայց համոզվեցի, որ այստեղ էլ կան ձեռներեց, հաջողակ երիտասարդներ, մանավանդ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: Որտեղ կա մրցակցություն, որտեղ կա հնարավորություն, նկատել եմ, հայերը ջանում են լավագույնը քաղել դրանից: Իսկ դեսպանությունը կնպաստի, որ բիզնեսի դաշտում լինի արդարություն, որպեսզի այն հաջողությունները, որոնք հայերը գրանցում են արտերկրում, լինեն նաեւ Հայաստանում: Մարզում մենք այցելեցինք մի պանրի գործարան, որի արտադրանքը մեզ հետ տանում ենք Երեւան: Գործարանն արտադրությունը սկսել էր վարկով, որը հատկացրել էր ԱՄՆ կառավարությունը»:

Դեսպան Հեֆերնը եռօրյա այցի շրջանակում եղել է Գորիսում եւ Մեղրիում, հանդիպել հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Մեղրիում այցելել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական շտաբ, եղել գյուղական համայնքներում, որտեղ ամերիկյան կառավարության օժանդակությամբ ծրագրեր են իրականացվում, ծանոթացել Խաղաղության կորպուսի կամավորների աշխատանքներին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Այունյաց երկիր

ԳԱԳԻԿ ՇԱՌՈՒԿՅԱՆ. «Ձեր եւ միայն ձեր ընտրությունից է կախված երկրի ապագան»

26 ապրիլի 2012թ., ք.Կապան: ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը:

Լուսանկարը՝ Շ.Ղամբարդումյանի

ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Սկսած գործը շարունակելու հաստատակամությամբ ու ապագան ավելի լավը դարձնելու պատասխանատվությամբ ընտրապայքարի շրջանակներում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդը երկօրյա այցով Սյունիքի մարզում էր: Գագիկ Ծառուկյանը եղավ Մեղրիում, Ագարակում, Քաջարանում, Կապանում, Գորիսում, Սիսիանում: Մեղրեցիների հետ ջերմ հանդիպման ընթացքում ԲՀԿ առաջնորդն ասաց, որ քաղաքական պայքարի մեջ է մտել ոչ թե իր անձնական շահի, պաշտոնի, այլ մեր երեխաների ապագայի համար. **«Ուզում եմ, որ մարդիկ պայման, հնարավորություն ունենան եւ պահեն իրենց ընտանիքները, չհեռանան հարազատ երկրից»:** Հանրապետության հարավային դարպասում՝ Ագարակ քաղաքում, Ծառուկյանը հանդիպեց հարյուրավոր մարդկանց հետ եւ նշեց. **«Ես իմ թիմակիցների կողքին կանգնած եմ: Թույլ չեմ տալու՝ որեւիցե մեկի մազը ծռվի: Դուք անօրինականություն չեք անում, դուք պաշտպանում եք ձեր իրավունքը՝ քվեարկելով ու պահանջելով: ԲՀԿ-ն տեր է կանգնելու իր քվեներին»:** ԲՀԿ նախընտրական քարոզարշավի հիմքում այս հավատամքն է. **«Մեր երազած բարեկեցիկ ու բարգավաճ Հայաստանը մենք կառուցելու ենք մեր հավաքական ուժով»:** Քաջարան քաղաքում ԲՀԿ առաջնորդը, ողջունելով ներկաներին, ասաց. **«Տեսնելով ժողովրդի ջերմությունը, հավատը, սերը՝ մենք մեզ ավելի պարտավորված ենք զգում: Անկախ ընտրությունների արդյունքից՝ ես իմ ժողովրդի կողքին կանգնած եմ լինելու եւ էլ ավելի շատ աշխատանք եմ կատարելու ձեր օրհնանքի խոսքը ստանալու համար»:** Մարզկենտրոն Կապանում

26 ապրիլի 2012թ., ԲՀԿ հանրահավաքը Կապանում:

Լուսանկարը՝ Շ.Ղամբարդումյանի

ԲՀԿ առաջնորդը ժողովրդին ներկայացավ համամասնական ցուցակով առաջադրված թեկնածու, կապանցի Մերուժան Սիմոնյանի հետ: Ծառուկյանն անկեղծ զրույց ունեցավ ընտրողների հետ եւ խոստացավ, որ իրենց խոսքը գործ է լինելու: **«Այս տարիների ընթացքում մեր վաստակած վստահությունն ու հավատը մենք ոչ միայն չենք կորցնելու, այլեւ բազմապատկելու ենք: Մենք պայքարելու ենք աղքատության ու գործազրկության դեմ: Հարկային դաշտում մեզ փոփոխություններ են անհրաժեշտ եւ դրանք կատարելու համար պետք է իրականացնենք համակարգված ու նպատակային գործողություններ»,** – ասաց ԲՀԿ ղեկավարը: Գագիկ Ծառուկյանի հաջորդ կանգառը Գորիս քաղաքն էր: Գրիգոր Տաթեւացու անունը կրող հրապարակում համակիրների հոծ բանակ էր հավաքվել: Մարդիկ եկել էին Ծառուկյանից տեղեկանալու կուսակցության ծրագրերի ու անելիքների մասին: ԲՀԿ առաջնորդը, անդրադառնալով ավանդների վերադարձմանն ու թոշակներին, նշեց. **«Թոշակառուները մեր երկրի աշխատավորներն են եղել: Նրանք պետք է կարողանան լիարժեք ապրել, այլ՝ ոչ թե նեղացած, նեղված, հիասթափված: Ամեն ինչ կախված է ժողովրդի ձայնից, քվեից: Ոչ ոք չի կարող ժողովրդին ստիպել, պարտադրել, իրեն հնազանդեցնել: Արդեն երրորդ տարին է անցել ֆինանսատնտեսական ճգնաժամից, այդ իսկ պատճառով պետք է ոչ թե հարկերը բարձրացվեն, այլ՝ թեթեւանան»:** ԲՀԿ ղեկավարի վերջին հանգրվանը Սիսիան քաղաքն էր: Սիսիանցիների հետ ջերմ ու անկեղծ զրույցի ժամանակ Ծառուկյանը նշեց. **«Երկրի հերոսը պետք է լինի աշխատավոր, ստեղծող մարդը: Մեր երկիրն ավելի լավը դարձնելու, մեր ցանկություններն իրականացնելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուրի քվեն: Աղքատության, գործազրկության դեմ պետք է պայքարենք: Ընտրեք, ձեր ձայնը տվեք նրան, ում հավատում ու վստահում եք: Ձեր եւ միայն ձեր ընտրությունից է կախված լինելու, թե ինչպիսի Հայաստան ենք մենք ունենալու: Դուք եք այն միակ ուժը, որ կարող է մեր հայրենիքը դարձնել ավելի բարեկեցիկ, ավելի խաղաղ ու անվտանգ»,** – ասաց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կապանի ՀԿ-ների ներկայացուցիչները բոյկոտեցին «Դինո գոլդի» նախաձեռնած լսումները

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

«Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ ընկերությունն արտադրությունում վերազինում կատարելու նպատակով ապրիլի 27-ին հերթական հանրային լսումներն էր կազմակերպել Կապանի քաղաքապետարանում: Մինչեւ վերազինման ծրագրի քննարկմանն անցնելը ՇՊԱԿ-ի համակարգող Արշավիր Խալափյանը, «Ազատամարտ» կոմիտեի նախագահ Խորեն Հարությունյանը, «Կայուն զարգացում» ՀԿ-ի նախագահ Արմեն Փարսադանյանը նշեցին, որ իրենք չեն կարող մասնակցել հանրային լսումներին, որովհետեւ միայն մեկ օր առաջ են իրենց ներկայացրել քննարկվող թեման, մտադրությունների ծրագիրը եւ նույնիսկ ժամանակ չի եղել ուսումնասիրել՝ հիմնական իմաստը հասկանալու համար: Ներկայացնելով իրենց բողոքները՝ նրանք չշարունակեցին մասնակցել միջոցառմանը:

Քննարկվող թեման ներկայացրեց ՀՀ բնապահպանության նախարարության փորձագետ Արթուր Մինասյանը. ««Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ն ծրագիր է ներկայացրել, ըստ որի նախատեսվում է ֆաբրիկայում գոյություն ունեցող տեխնոլոգիական շղթայի շարունակության մեջ տեղադրել մի քանի լրացուցիչ գործողություն, որը թույլ կտա խտանյութի մեջ կապարի քանակը երկու անգամ իջեցնել: Ուսումնասիրելով ներկայացրած աշխատանքները, եկել ենք եզրակացության, որ կիրառվող տեխնոլոգիան բավականին անվնաս է լինելու շրջակա միջավայրի համար»: Ինչպես նշում էին մասնագետները՝ բնապահպանական առումով մեծ փոփոխություններ չեն լինելու: Խտանյութի մեջ կապարի քանակն իջեցվելու է ավանդական մեթոդներով: Ներկաներից բնապահպան Վլադիկ Մարտիրոսյանը հասցրել էր ուսումնասիրել «Դինո գոլդ մայնինգ քամփնիի» ներկայացրած փաստաթուղթը եւ գտել բազում անհամապատասխանություններ: Վ.Մարտիրոսյանը, անդրադառնալով փաստաթղթում ներկայացված աղյուսակներին, ասաց, որ պետք է աղյուսակ 10-ը վերանայվի, որովհետեւ այնտեղ ներկայացված թվերն ամբողջովին սխալ են: **«Վերազինման աշխատանքների ընթացքում աշխատողներ չեն կրճատվելու, եւ դրա հետ մեկտեղ աշխատավարձերը չեն բարձրանալու»,** – ասաց «Դինո գոլդ մայնինգ քամփնիի» բնապահպանության բաժնի մենեջեր Վահե Վարդանյանը:

«Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ի վարչական տնօրեն Հրաչ Զաբրայանը ծրագրի մասին նշեց. **«Մենք ընդամենը ցանկանում ենք ֆաբրիկայում ավելացնել արդիական սարքեր, որոնց շնորհիվ կկարողանանք իջեցնել խտանյութի մեջ կապարի քանակը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ծրագիրը բնապահպանության վրա բացասական ազդեցություն չի թողնելու»:** Կրճատումների մասին Կապանում տարածված խոսակցությունների վերաբերյալ Զաբրայանն ասում է. **«Վերջին օրերին կոմբինատի աշխատողներին կրճատելու մասին բազում ասեկոսեներ ենք լսում, բայց հակառակ դրան՝ ասեմ, որ վերջին երեք շաբաթվա ընթացքում 37 հոգի աշխատանքի ենք ընդունել եւ դեռ առաջիկայում 17 հոգու եւս պետք է ընդունենք: Եթե կրճատելու լինենք, ապա կրճատելու ենք այն աշխատողներին, ովքեր 70-ն անց են: Ճիշտ է՝ նրանցից շատերին ճանաչում եմ, լավ աշխատողներ են, բայց արդեն, տարիքի պատճառով, արտադրությունում նրանց աշխատելը վտանգավոր է: Նաեւ այդ քայլով կփորձենք երիտասարդների համար ինքնադրսեւորման հնարավորություն ստեղծել»:**

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am
ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

Նրանց անուն-ազգանունն ընդգրկված է քվեաթերթիկներում

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

«Պատգամավորության թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչեւ ժամը 18.00-ն, ինչպես նաեւ քվեարկության օրվանից հետո դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է հանձնաժողովի նիստում»:

ՀՀ ընտրական օրենսգիրք, Հոդված 121/3

Թիվ 37 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ

ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀԿ

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Անկուսակցական



ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Անկուսակցական

ՎԱՐԱԶԴԱՏ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Անկուսակցական

Թիվ 38 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ

ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՅԴ կուսակցություն

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀԿ



ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Անկուսակցական

ՆԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Անկուսակցական

Ծանոթություն

Սահմանված ժամկետում ինքնաբացարկի դիմում են ներկայացրել եւ իրենց թեկնածությունը հանել Մալիկ Թելունցը (N37 ընտրատարածք), Արտակ Սիսակյանը (N37 ընտրատարածք), Հայկ Բարսամյանը (N38 ընտրատարածք):

3887-ով ավելացել է մարզի ընտրողների թիվը

2008-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ազգային ժողովի առաջիկա ընտրությունների անցկացման համար Սյունիքի մարզում կազմավորվել է 153 ընտրական տեղամաս, 77-ը՝ թիվ 37 ընտրատարածքում, 76-ը՝ թիվ 38 ընտրատարածքում: Գորիս քաղաքում կազմավորվել է 10, այդ թվում՝ մեկը «Գորիս» ՔԿՀ-ում, Սիսիան քաղաքում՝ 7, Կապան քաղաքում՝ 21, Քաջարան քաղաքում՝ 3, Մեղրի քաղաքում՝ 2, Ագարակ քաղաքում՝ 3 տեղամաս: Մարզի գյուղական համայնքներում կազմավորվել է մեկական ընտրական տեղամաս, բացի Տեղ, Խնձորեսկ, Դարբաս եւ Լեռնաձոր գյուղերից, որոնցում ձեւավորվել է երկուական տեղամաս: Ընտրողների ցուցակում (մարզում) ընդգրկված է 105.443 ընտրող: Նշենք, որ 2008թ. նախագահական ընտրության ժամանակ ընտրողների թիվը 101.556 էր (ըստ «Սյունյաց երկրի» 2008թ. հունվարի 20-ի N2-ի):

Թիվ 37 ընտրատարածքում ընտրություններին մասնակցելու իրավունք ունի 55025 ընտրող՝ նախկին 52553-ի փոխարեն, այդ թվում Դաստակերտ քաղաքում՝ 201, Սիսիան քաղաքում՝ 12255, Գորիս քաղաքում՝ 16158 ընտրող: Թիվ 38 ընտրատարածքում ցուցակային թիվը 50391 ընտրող է՝ նախկինի 49003-ի փոխարեն, այդ թվում՝ Կապան քաղաքում՝ 30.591, Քաջարան քաղաքում՝ 5081, Ագարակ քաղաքում՝ 3484, Մեղրի քաղաքում՝ 3551 ընտրող:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2008թ. նախագահական ընտրության ժամանակ ընտրողների թիվը մարզում
101,556

Թիվ 37 ընտրատարածքում ընտրություններին մասնակցելու իրավունք ունի
2008 **52,553** 2012 **55,025**

2012թ. ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը մարզում
105,443

Թիվ 38 ընտրատարածքում ընտրություններին մասնակցելու իրավունք ունի
2008 **49,003** 2012 **50,391**

Ընտրողների թիվը / Թիվ 37

ԳՈՐԻՍ	16,158
ՍԻՍԻԱՆ	12,255
ԴԱՍՏԱԿԵՐՏ	201

Ընտրողների թիվը / Թիվ 38

ԿԱՊԱՆ	30,591
ՔԱՋԱՐԱՆ	5,081
ՄԵՂՐԻ	3,551
ԱԳԱՐԱԿ	3,484

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրողը նշում է կատարում այն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվանման դիմացի դատարկ քառանկյունում, որին կողմ է քվեարկում: Նշումը կատարվում է միայն V ձևի նշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ — 6 մայիսի 2012թ.
ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

			Նշումի համար
1	<<ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ծառուկյան Գագիկ Կոլյայի Օսկանյան Վարդան Մինասի Վարդանյան Վարդան Նահապետի	
2	<<ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Հովհաննիսյան Ռաֆֆի Կ. Ռիչարդի Քոչոբելյան Խաչատուր Գրիշայի Փոստանջյան Զարուհի Համազասպի	
3	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	Տեր-Պետրոսյան Լևոն Հակոբի Դեմիրճյան Ստեփան Կարենի Սարգսյան Արամ Զավենի	
4	<<ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Հովհաննեսյան Վահան Էդուարդի Ռուստամյան Արմեն Եզնակի Շահբազյան Արտյուշ Վարդգեսի	
5	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Սարգսյան Արամ Գասպարի Աղալովյան Լենսեր Աբգարի Հովսեփյան Արմեն Ամիրխանի	
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Թովմասյան Ռուբեն Գրիգորի Սաֆարյան Վազգեն Մեխակի Սարգսյան Տաճատ Գեղամի	
7	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Սարգսյան Սերժ Ազատի Աբրահամյան Հովիկ Արգամի Սարգսյան Տիգրան Սուրենի	
8	<<ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Ավագյան Ռուբեն Հովսեփի Հովսեփյան Գուրգեն Սարգիսջանի Անդրեասյան Գայանե Ցուրիկի	
9	<<ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Բաղդասարյան Արթուր Վահանի Բիշարյան Հեղինե Վաչեի Երիցյան Արմեն Հենրիկի	

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

Նախընտրական տրամադրությունները Սյունիքում

Մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ընտրություններին հաշվված օրեր են մնում: Իսկ ինչպիսի նախընտրական տրամադրություններ են տիրում մարզում, արդյո՞ք բնակիչները որոշել են, թե ում են տալու իրենց քվեն, հավատո՞ւմ են ազատ եւ արդար ընտրությունների կայացմանը, սպասո՞ւմ են որեւէ փոփոխության. այդ հարցերի պատասխանները որոշեցինք պարզել հարցախույզի միջոցով: Սկսեցինք Քաջարանից:

Քաջարանում՝ վախի մթնոլորտ

Երիտասարդ եւ միջին տարիքի բնակիչների մեծ մասը խուսափում էր մեր հարցերից, հրաժարվում պատասխանել, ներկայանալ, լուսանկարվել, ոմանք բարեհամբույր էին, ոմանք՝ ագրեսիվ ու անքաղաքավարի: Հարցմանը մասնակցած բոլոր քաջարանցիները հավաստիացրին, որ իրենք անպայման գնալու են ընտրության: Մեզ հետ զրուցեցին հիմնականում տարեցները՝ հայտնելով իրենց մտավախություններն ու դժգոհությունները: Ոմանք էլ՝ նախ մի բան են ասում, հետո՝ մի ուրիշ: 70-ամյա մի կին, ով չներկայացավ, որովհետեւ մեր խոսակցությունը ձայնագրվում էր, ասաց. *«Ում որ ասեմ՝ նրան էլ ընտրելու եմ, բոլոր թեկնածուներին էլ ճանաչում եմ, դժվար է ասել, թե այս ընտրություններից հետո բան կփոխվի, բայց ուզում ենք, որ մեր ուզած թեկնածուն ընտրվի՝ մեր համաքաղաքացի Վահե Հակոբյանը»:* Վաճառողուհի Մարիետա Աթայանն ասում է, որ անպայման գնալու է ընտրության, չգիտի, թե ընտրություններից հետո որեւէ փոփոխություն կլինի արդյոք, սակայն ցանկանում է, որ խաղաղություն լինի, երկրի վիճակը կայուն լինի, թանկացումներ չլինեն: Իսկ թե ում է ընտրելու, արդեն գիտի, բայց այդ մասին գերադասում է չբարձրաձայնել: 80-ամյա Գրիշա պապն էլ իր տեսակետն է հայտնում. *«Ինչ ընտրության մասին է խոսքը, եթե մեր փոխարեն ուրիշներն են որոշում: Մի փոքր Հայաստանում 70 կուսակցություն կա, ինչի համար են այդ բոլորը՝ չգիտեմ: Ասենք, թե ես իմ իմացած մարդուն եմ ընտրելու, բայց անցնելո՞ւ է իմ քվեն: Մեր երկիրը տեր չունի, ղեկավար չունի, անտեր ենք: Այսօր ղեկավարները իրենց համար են մտածում, այլ ոչ ժողովրդի: Եթե այսպես շարունակվի, մեր սերունդները չեն կարողանա ապրել, գոյատեւել: Օր օրի թանկացումներ են: Մարդիկ մահանում են, որովհետեւ վիրահատության, դեղամիջոցների համար փող չունեն: Օրերս Ռաֆֆի Հովհաննիսյանն էր եկել Քաջարան, միայն նրան եմ հավատում, ձայնս էլ հենց նրան եմ տալու: Մտածում եմ, եթե իշխանափոխություն չլինի, երկրի վիճակը շատ վատ կլինի: Հսկայական կոմբինատ կա քաղաքում, բայց պետությանը չի պատկանում, հասարակ ժողովուրդը դրանից ոչ մի օգուտ չունի»:* Երկար տարիներ դպրոցի տնօրեն աշխատած Վանյա Գալստյանն էլ չի հավատում, թե մայիսի 6-ի ընտրություններից հետո որեւէ փոփոխություն կլինի. *«Ընտրություն է լինելու, բայց ամեն ինչ նույնն է մնալու, ամեն անգամվա պես նույնը կրկնվելու է: Ոչ մի առաջխաղացում չի լինի, կյանքը ինչպես կա՝ այնպես էլ կշարունակվի: Քվեարկելու եմ նրա օգտին, ով արժանի է պատգամավոր լինելու, ով կմտածի ժողովրդի մասին, ոչ թե թիկնապահների բազմության մեջ կթաքնվի, այլ պարզ ճակատով կքայլի ժողովրդի հետ: Հաճախ գալիս են, հարցնում, թե ում ես ընտրելու, ասում եմ՝ դա միայն իմ գործն է»:* Թոշակառու լեռնագործ Հրանտ Մարգարյանը հետեւում է քարոզարշավին, սակայն իր համար անհասկանալի է, թե ինչու են մարդիկ հավատում Արթուր Բաղդասարյանին, ինչու են շատ-շատերը նրա կուսակցությանը անդամագրվում: *«Ոչնչից չեմ վախենում, կընտրեմ նրան, ում նախընտրում եմ»,* – ասում է Հ.Մարգարյանը:

Տիկին Սաթենիկ Մկրտչյանը մայիսի 6-ին քվեարկելու է Վահե Հակոբյանի օգտին, վստահ է, որ նա այս անգամ կարդարացնի բոլորի հույսերը, կկարողանա աշխատանքով ապահովել շատերին, օգնել կարիքավորներին եւ խոչընդոտել տեղի ունեցող արտագաղթին:

– Իմ նախընտրած թեկնածուի մասին լավ գրի եւ քեզ համար լավ կլինի, – ասում է տիկին Սաթենիկը եւ ինձ ուղեկցում դեպի մոտակա կանգառ:

Իսկ բոլոր նրանք, ովքեր երիտասարդ են, ունեն աշխատանք, վախենում էին սեփական կարծիք հայտնել:

Գորիսում բոլորը կողմնորոշվա՞ծ են

Գորիսում եւս, ինչպես Քաջարանում, շատերը հրաժարվեցին մեր հարցերին պատասխանել, ոմանք չներկայացան, իսկ մի 50-ամյա տղամարդ էլ խորհուրդ տվեց մեր հարցերը ժողովրդին տալ, ըստ երեւույթին նա իրեն ժողովրդի մասնիկ չի համարում: Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունն արդեն կողմնորոշված է եւ մասնակցելու է ընտրությանը: 80-ամյա Ասրյան Ալյոշան ասում է, որ միանգամից կողմնորոշվել է, թե ում է ընտրելու: *«Բոլորին ճանաչում եմ, գիտեմ, հանրապետականի թեկնածուն՝ ջահել է, ասում են 4 լեզու գիտի: Փոփոխության հավանականությունը քիչ է ոչ միայն մեր հանրապետությունում, այլ տարածաշրջանի պետություններում: Միայն թող երկիրը խաղաղ լինի»,* – ասում է նա: Տիկին Աշխենը հույս ունի, որ ամեն ինչ լավ կլինի, հավատում է իր ընտրած թեկնածուին: Ավագյան Նորայրն էլ նախապատվությունը տալու է «Բարգավաճ Հայաստան» եւ Հանրապետական կուսակցություններին՝ հաշվի առնելով նրանց կազմի մեծությունը: Բայց մտահոգվում է ժողովրդի վիճակով. *«Ուղղակի ժողովրդի ընդհանուր վիճակը վատ է, միջին խավ չկա՝ հարուստներ են եւ աղքատներ: Իմ նախընտրած թեկնածուն կրթված է, ըստ իս դա կարեւոր հատկանիշ է պատգամավորի համար»:* 82-ամյա Ազատ պապը չի որոշել, թե ում կընտրի:

Սիսիանում տրամադրությունները բարեխառն են

Նախընտրական տրամադրությունները Սիսիան քաղաքում բարեխառն էին: Շատերը նույնիսկ չգիտեին, թե ովքեր են առաջադրված թիվ 37 ընտրատարածքում, ո՞ւմ պետք է ընտրեն, ո՞ւմ վստահեն մարզի ապագան: Հարցախույզի ընթացքում պարզվեց, որ բազմաթիվ մարդիկ հոգնել են ընտրություններից, քարոզարշավներից. *«Երբ կլինի՝ վերջանան այս ընտրությունները, հոգնել ենք արդեն այս վիճակից»,* – ասում են Սիսիանի բնակիչներից շատերը:

Ընտրությունները Սիսիանի բնակչության մի մասի համար էլ հույսի աղբյուր են. *«Երեւի ընտրություններից հետո մեր կյանքը կփոխվի, նոր աշխատատեղեր կբացվեն, մարդիկ աշխատանք կունենան: Կարծում եմ, որ այսօր Սիսիանի ամենակարեւոր խնդիրն աշխատատեղն է»,* – ասում է Գայանե Հարությունյանը: Հարցախույզի ընթացքում հանդիպեցինք մարդկանց, ովքեր հուսահատված էին եւ չէին հավատում ոչ առաջադրված թեկնածուներին, ոչ նրանց խոստումներին: Պավլուշ Ավագյանն ասում է. *«Ի՞նչ ընտրություններ, ի՞նչ բարեփոխումներ: Անգործ մարդ եմ, ո՞վ է իմ մասին մտածում, աշխատանքով ապահովում: Որոշել եմ արդեն՝ ում եմ ձայնս տալու, բայց չգիտեմ՝ իմ ընտրած թեկնածուն ինձ աշխատանք կտա՞, թե՞ ոչ»:* Կային մարդիկ, ովքեր նույնիսկ չգիտեին՝ ընտրության գնալու են, թե ոչ, վիրավորված էին պետությունից, իշխանությունից. *«Դեռ չենք կողմնորոշվել, թե ում կընտրենք: Նույնիսկ չգիտենք՝ ընտրության գնալու ենք, թե ոչ»:* Իհարկե, հնչեցին նաեւ հակառակ կարծիքներ. *«Միանշանակ կողմնորոշվել ենք, թե ում ենք ընտրելու: Առաջին հերթին հաշվի ենք առել կենսափորձը, գրագիտությունը, պատրաստվածությունը եւ ամենակարեւորը՝ ժողովրդին ծառայելու ունակությունը: Մենք ուշադրություն չենք դարձրել թեկնածուների ծրագրերին, որովհետեւ կարծում ենք, որ բոլոր ծրագրերը երկրորդական են»*:

Կապանում ակնհայտ դժգոհություններ կան

Կապանում շատերն են դժգոհություններ հայտնում, ոչ միայն տարեցները, այլեւ երիտասարդները: *«Ընտրությունները դարձել են պարտականության, ծեւականության նման մի բան, նույն խոստումները, ինչ այսօր են տալիս, տվել են հինգ տարի առաջ, սակայն այդպես էլ չեն կատարել: Կապան եւ Քաջարան քաղաքներում երկու խոշոր կոմբինատ կա, բայց մեր ճանապարհների վիճակը վատ է: Թեկնածուներին ճանաչում ենք, տարիներ շարունակ նույն թեկնածուներն են: Եթե մի թեկնածու ոսկի սարեր է խոստանում եւ ոչինչ չի անում, հիմա նորից եկել, նորից խոստումներ է տալիս, նրան, իհարկե, չենք հավատա: Չեմ վախենում, որ աշխատանքից կազատեն, քանի որ աշխատանք չունեմ, տաքսի եմ վարում, որ ընտանիքս պահեմ»,* – ասում է տաքսու երիտասարդ վարորդը:

25-ամյա մի աղջիկ էլ ասաց, որ չի գնալու ընտրության, որովհետեւ հիասթափված է, չի հավատում արդար ընտրությունների անցկացմանը:

Տիկին Սվետլանան, ով ծաղիկներ է վաճառում Կապանի շուկայում, ասաց. *«Գնալու եմ ընտրության՝ կողմնորոշվել եմ, բայց չեմ կարծում, որ ինձ ինչ-որ մեկն օգնելու է, ես իմ աշխատանքով ապրում եմ եւ այդպես էլ ապրել եմ ողջ կյանքում: Ոչ մի պատգամավորի վրա հույս չեմ դնում»:*

Մի տղամարդ էլ ասաց. *«Ընտրությունը մեզ համար չէ, իրենց համար է, ո՞ր մեկն է մի անգամ եկել՝ հարցրել, այ մարդ, ապրո՞ւմ ես, թե՞ մեռնում, ով լավ դրսեւորի իրեն, նրան էլ կընտրեմ»:*

Ագարակը մարզի ամենահանրապետականացված քաղաքն է

Ագարակում իրավիճակը զգալիորեն տարբերվում է մարզի այլ քաղաքների համեմատ: Եթե, ասենք, Կապանում կամ Քաջարանում մարդիկ չեն ներկայանում, կուսակցության կամ թեկնածուի անուն չեն տալիս, ապա Ագարակում հարցումին մասնակցած բնակիչներից վեցից հինգը պատասխանեց, որ գնալու են ընտրության, քվեարկելու են ՀՀԿ-ի եւ N38 ընտրատարածքում մեծամասնականով առաջադրված պատգամավորության թեկնածու Վահե Հակոբյանի օգտին, որովհետեւ վերջինս Ագարակում մանկապարտեզ է վերանորոգում եւ ագարակցիներին աջակցում է ամենատարբեր հարցերում: Չի բացառվում նաեւ այն տարբերակը, որ ինչ-ինչ հանգամանքներից դրդված՝ մարդիկ կեղծ պատասխան են տվել: Մի երիտասարդ աղջիկ էլ ասաց, որ թեկնածուներից ոչ մեկին չի ճանաչում ու չգիտի՝ ում կընտրի:

Անվաճ Մեղրին

Չնայած, որ Մեղրիում նույնպես վախի մթնոլորտ կա, սակայն ակնհայտ դժգոհություն կա գործող իշխանություններից:

75-ամյա մի կին չներկայացավ, բայց ասաց, որ ոչ մի լավ ակնկալիք չունի գալիք ընտրություններից: *«Ինձ հող էին տվել վարձակալությամբ, սակայն օրերս այդ հողը ինձնից խլեցին, հիվանդանոց կառուցելու համար, եւ ոչ մի փոխհատուցում չեն տալիս, չնայած այն բանին, որ այդ տարածքը նախկինում խոտհարք էր, իսկ ես ծառեր եմ տնկել, այգի դարձրել: Ծախսեր եմ արել, բայց զրկվել եմ ապրուստի միջոցից, շատ հնարավոր է, որ չգնամ ընտրության: Ոչ մի ակնկալիք չունեմ, ոչ մեկի արած գործը չեմ տեսել, մենակ քանդելն եմ տեսել»,* – ասաց նա:

«Ընտրություններին բոլորը խոստանում եմ, բայց՝ սուտ, Մեղրին այնպիսի հասարակ բաներից է զուրկ, ինչպիսիք են հասարակական զուգարանը, նորմալ գրադարանը եւ այլն: Եվ ոչ մեկն այս մասին չի մտածում», – ասում է 80-ամյա մեղրեցի Ծովակ Պողոսյանը: Իսկ Քաջիկ Ստեփանյանն ասում է, որ ընտրելու է Վահե Հակոբյանին, որովհետեւ նա վետերանների խորհրդին 100 հազար դրամ է տվել, աթոռ է տվել, մանկապարտեզ է վերանորոգում: Մեկ այլ մեղրեցի՝ Սոս Խաչատրյանը, հայտնեց, որ չի գնալու ընտրության, որ չի հավատում նույնիսկ ինքն իրեն, ուր մնաց, թե ինչ-որ պատգամավորի: *«Նրանք ժողովրդի համար չեն մտածում, այլ միայն իրենց փողի»:* Տիկին Սվետան էլ ասաց, որ ընտրելու է իր համերկրացի Դավիթ Մաթեւոսյանին. *«Դավիթ Մաթեւոսյանի հետ հանդիպմանը վախի մթնոլորտ կար, շատերը չէին եկել՝ վախենալով կորցնել իրենց աշխատանքը: Լավատես եմ՝ հավատում եմ, որ փոփոխություններ կլինեն, սակայն հույսս միայն այս թեկնածուի հետ չեմ կապում, ուղղակի լավ կլինի, որ ապագա ԱԺ-ում լինի մի պատգամավոր, ով կկանգնի մեղրեցու թասիբին»:*

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Հայացք Մեղրուց

Լուսանկարը՝ Զ.Համբարձումյանի

Լիլիթ Քառյանը 19 տարեկան է, ապրում է Մեղրիում: Սովորում է Գորիսի պետհամալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հեռակա բաժնում: Ուսման հետ համատեղում է նաեւ աշխատանքը: Լիլիթը շատ քիչ ընկերներ ունի, ասում է, որ խոսելու ընդհանուր թեմա չկա, երիտասարդների մեծամասնությունը նախընտրում է միայն անձնական կյանքից եւ առօրյա հոգսերից խոսել: **«Մեղրիում ուսանողները հաճախ դժվարություններ են ունենում, մանավանդ գրքեր ձեռք բերելու հարցում, քանի որ քաղաքում նորմալ գրադարան, գրախանութ չկա: Երիտասարդների մեծամասնությունն անտարբեր է բոլոր հարցերում, սկսած քաղաքականից մինչեւ մշակութայինը եւ բնապահպանականը»,** – ասում է Լիլիթը: Ոչ ոք չի մտածում երկրի ապագայի, վաղվա օրվա մասին, բոլորն ապրում են միայն օրվա հոգսերով: Մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ընտրությունների հետ երիտասարդներն առանձնակի հույսեր չեն կապում, ասում են՝ ինչպես եղել է, այդպես էլ կշարունակվի: Քարոզարշավի ընթացքում նույնպես Մեղրու երիտասարդությունն ակտիվություն չի ցուցաբերել: Շատերն ընտրատարածքի թեկնածուներին ծանոթ չեն, կուսակցությունների գործունեությունից, ծրագրերից անտեղյակ են: Մեղրին այսօր շատ հիմնախնդիրներ ունի, որոնք լուծման կարիք ունեն: Հրատապներից Լիլիթը համարում է բերքի իրացման խնդիրը, որի լուծումը հնարավորություն կտա մեղրեցուն ապահովել իր ընտանիքը, բայց այս ամենից զատ նա կարեւորում է տարածաշրջանի բնապահպանական խնդիրների լուծումը: Մեր երկրի շատ հիմնախնդիրների հիմքում, ըստ Լիլիթի, ընկած է անհամախմբվածությունը. **«Յուրաքանչյուր խնդիր հնարավոր է լուծել միահամուռ ուժերի եւ ջանադիր աշխատանքի շնորհիվ: Նկատել եմ, որ մարդիկ սրտացավ չեն դիմացինի, շատերը նույնիսկ անտարբեր են երկրում կատարվող ամենատարբեր դեպքերի նկատմամբ, ամենուրեք հիասթափություն է տիրում, եւ Մեղրին այս առումով բացառություն չէ»,** – իր հայացքն է ներկայացնում նա:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

Հանրությունն արթնության նշաններ է ցույց տալիս

Իսկ իշխանությունը պահելու կամ իշխանության հասնելու բոլոր ձեւերը, կարծեք, թույլատրելի են ու արդարացված

ՀԱՅԱՑՔ ՍՅՈՒՆԻՔԻՑ

Սկիզբը՝ էջ 1

Տեր-Պետրոսյանի գլխավորած ՀԱԿ-ին: Քաղաքական այդ դաշինքն է, որ հինգ տարի շարունակ բազմաթիվ զրկանքների գնով (նաեւ մարդկային զոհերի գնով) սասանեց իշխող քաղաքական ուժի հիմքերը: Բայց, որքան էլ տարօրինակ է (պատմության ընթացքում նման դեպքեր արձանագրվել են քանիցս), քաղաքական դաշտը հերկած ՀԱԿ-ը չդարձավ այն ուժը, որ պետք է իրականացներ իր իսկ հերկած դաշտի հունձքը ներկա ընտրություններում (պատճառը խոսակցության այլ թեմա է):

Մի դատապարտելի եւ անբնական միտում կար սյունիքյան քարոզարշավում: Ե՛վ կուսակցությունները, ե՛ւ պատգամավորության թեկնածուներն իրենց ծրագրերում եւ ելույթներում խուսափում էին Սյունիքի բնակչությանը մտահոգող հարցերը, սյունիքյան հիմնախնդիրներն արծարծելուց, ինչը շատ վիրավորական է այստեղ ապրողներիս համար: Ընդհանուր այդ կանոնից, կարծեք, փոքր-ինչ շեղում կատարեցին (հաճելիորեն) ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն, «Ժառանգությունը»: Գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանը (օրինակ) գիտեր, թե Արցախյան ազատամարտի կապանցի մասնակիցներից ով ինչ (անուն առ անուն) հոգսեր ունի: Հրանտ Բագրատյանն անգերազանցելի իմացությամբ ներկայացրեց սյունիքյան հանքարդյունաբերության ներկայիս վիճակը: Զարուհի Փոստանջյանը որերորդ անգամ մատնացույց արեց այն պատճառները, որոնց հետեւանքով Սյունիքը կանգնել է բնապահպանական աղետի առջեւ: N38 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Գագիկ Գեւորգյանը քաղաքացիական համարձակություն ունեցավ եւ իր քարոզչական նյութերի հիմքում դրեց բացառապես ընտրատարածքի (Կապանի եւ Մեղրու շրջանների) հիմնախնդիրները:

Շառլատանությունը, որերորդ անգամ, հասավ իր բարձրակետին: Մի քանի հոգի, նախկին ընտրությունների ոճով, տեղի-անտեղի, առանց կարմրելու օգտագործում էին «սյունյաց ժողովուրդ», «ես պետության զինվորն եմ», «պետական շահ», «պետական մտածելակերպ» եւ նման այլ բառակապակցություններ: Ի գիտություն այդ խոսքերի հեղինակների՝ չկա «սյունյաց ժողովուրդ», կա հայ ժողովուրդ, որի մի մասնիկն էլ Սյունիքի մարզում ապրողներս ենք: Իսկ ես՝ Սամվել Ալեքսանյանս, պետության զինվոր չեմ, ես ընդամենը Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ: Բայց եթե, այնուամենայնիվ, ինչ-որ մեկը պնդում է՝ «Ես պետության զինվորն եմ», ապա այդ մարդն ուզում է տարբերվել մյուսներից, ուզում է իրեն վեր դասել մյուսներից: Առհասարակ՝ դյուրին է լինել ինչ-որ մի աներեւույթ, անառարկա, անշոշափելի, անտեսանելի հասկացության զինվոր: Իսկ հանրապետության քաղաքացի լինել՝ նշանակում է ունենալ ստույգ իրավունքներ ու պարտականություններ, որոնց համար, ի վերջո, պատասխան ես տալիս: Ի վերջո պետությունը հենց այդ քաղաքացիների հանրագումարն է: Եվ հետո՝ քաղաքագիտական տարրական կանոններն ասում են՝ որեւէ կուսակցության անդամագրված, որեւէ կուսակցության նախընտրական շտաբում ծվարած մարդու համար չի կարող կուսակցական շահը գերակա չլինել պետական ու ազգային շահից, այլապես ինքն այդ շտաբում կամ կուսակցության մեջ ընդամենը խաղեր է տալիս: Իսկ երբ գործածում ենք պետություն, հայրենիք բառերը, ապա, առնվազն պետք է ճշտում մտցնել՝ ի՞նչ ասել է հայրենիք, ի՞նչ ասել է պետություն: Եթե հայրենիքը, պետությունն օրվա իշխանավորների հոմանիշ են կամ ինչ-որ մարդկանց աթոռների, ունեցվածքի անվտանգության խորհրդանիշ, ապա, կներեք, այդ հայրենիքն ու պետությունը կապ չունեն հայ ժողովրդի իրական շահերի, հայոց պետականության հետ: Առավել ծիծաղելի է դեպքը, երբ օրական 24 ժամ երկրի թալանով զբաղված մեկը ներկայանում է իբրեւ պետական մտածելակերպի կրող եւ ուրիշներին զրպարտելու անվերջ վարժանքներ անում:

Կար մի հարց, որի հանդեպ հետաքրքրությունը մինչեւ վերջ պահպանվեց: ՕԵԿ-ն ու ԲՀԿ-ն Սյունիքի մարզի երկու ընտրատարածքում պատգամավորության թեկնածու չառաջադրեցին: N37-ում մեծամասնական կարգով պատգամավորության թեկնածու չառաջադրեց նաեւ ՀՅԴ-ն: Մեծամասնական թեկնածուներից ո՞ւմ են սատարելու այդ ուժերը. ուշագրավ այդ հարցն այդպես էլ ստույգ եւ որոշակի պատասխան չստացավ: Որքանով հասկացանք՝ N37-ում Թաքուլ Հակոբյան թեկնածուին սատարում է ՀՅԴ-ն: ԲՀԿ Սիսիանի կառույցը նույնպես սատարում է Թաքուլ Հակոբյանին, ինչի մասին նախընտրական հանդիպումներում քանիցս հայտարարեց Աղասի Հակոբջանյանը (ԲՀԿ Սիսիանի կառույցի ղեկավարն է): Անգամ ՀԱԿ-ի սիսիանյան կառույցը, թեեւ այդ ընտրատարածքում ուներ իր մեծամասնական թեկնածուն, հակված էր դեպի Թաքուլ Հակոբյանը:

Սիսիանյան այդ կոնսոլիդացիան, որի հիմքում, անշուշտ, նաեւ տեղային հայրենասիրությունն է, տեղի չունեցավ N37 ընտրատարածքի մյուս հատվածում՝ Գորիսի շրջանում: Ճիշտ է, Մալիկ Թելունցը դուրս եկավ ընտրապայքարից, բայց Հայկ Գրիգորյանը, Վարազդատ Վարդազարյանը եւ Սամվել Հարությունյանն այդպես էլ ընդհանուր հայտարարի չեկան, ինչը նշանակում է, որ Գորիսի շրջանում քվեները կբաշխվեն առնվազն երեք հոգու միջեւ: Ստեղծված իրավիճակում, ըստ երեւույթին, N37 ընտրատարածքում մրցապայքարը կընթանա ՀՅԿ թեկնածու Հայկ Գրիգորյանի եւ Թաքուլ Հակոբյանի միջեւ:

ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի, անգամ ՕԵԿ-ի գորիսյան կառույցներն այդպես էլ չարտահայտեցին իրենց դիրքորոշումը մեծամասնական թեկնածուների վերաբերյալ: Եթե ԲՀԿ-ին ու ՀՅԴ-ին հասկանալ կարելի է, ապա ՕԵԿ-ի գորիսյան կառույցին՝ ոչ (թեեւ ՕԵԿ-ի գորիսյան կառույցն այսօր եւս կենդանության նշաններ ցույց չի տալիս): Իմիջիայլոց, ՕԵԿ-ի Սիսիանի կառույցը նույնպես ամեն ինչ թողել է իր շարքերի հայեցողությանը:

N38 ընտրատարածքում նույնպես ԲՀԿ-ն, ՕԵԿ-ը մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից որեւէ մեկին աջակցելու վերաբերյալ հայտարարություն չարեցին՝ ամեն ինչ թողնելով կուսակցության անդամների հայեցողությանը: Ավելի վաղ ԲՀԿ Կապանի կառույցում քննարկվում էր ՀՅԴ թեկնածու Գագիկ Գեւորգյանին սատարելու հարցը:

Նախընտրական պայքարի այս օրերին, բնականաբար, ամենամեծ գործիքը շարունակում է մնալ բանսարկությունը: Ոչ պակաս կարեւոր գործիք է խարդավանքը: Երկու այդ գործիքների գծով մենք բավականին մեծ թվով արհեստավարժ կադրեր ունենք, ովքեր հանգրվանել են գրեթե բոլոր նախընտրական շտաբներում եւ հատկապես իշխող կուսակցության նախընտրական շտաբներում: Բիր-իքի լումայի արժեք ունեցող բազմաթիվ մարդիկ իշխող կուսակցության նախընտրական շտաբներից փորձում են քավության նոխազներ նշանակել, մեղավորներ փնտրել եւ այդ ամենին զուգահեռ անձնական հարցեր լուծել նախընտրական այս լարված օրերին: Բանսարկությունն աննախադեպ աստիճանի է հասել ՀՅԿ-ի գորիսյան շտաբում եւս, ինչի համար ափսոսանք ենք հայտնում:

Քարոզարշավի ուշագրավ դրվագներից մեկը, անտարակույս, ԲՀԿ-ի սյունիքյան հանրահավաքների մարդաշատությունն էր: Դա նկատելի էր ե՛ւ Ագարակում ու Մեղրիում, ե՛ւ Քաջարանում ու Կապանում, ե՛ւ Գորիսում ու Սիսիանում: Սիսիանի հանրահավաքը, հիրավի, աննախադեպ էր: Գագիկ Ծառուկյանին նման ջերմությամբ ընդունելը որոշակի պատճառներ ունի: Մարդկանց մի մասը հավատում է քաղաքական այդ ուժին, մյուս մասը՝ համակրում: Բայց մեծամասնությունը, անկեղծ լինենք, նրանք էին, ովքեր երկրի քաղաքական դաշտում երրորդ ուժ են փնտրում, այլընտրանք: Տարիներ շարունակ ՀՅԿ-ն զբաղված էր բացառապես ՀԱԿ-ին մորթելով եւ չէր տեսնում, որ իր կողքին աճում ու ամրապնդվում է մի նոր քաղաքական ուժ՝ երկրի իրական իշխանությունը կիսելու ստույգ հավակնությամբ: Եվ ահա այդ քաղաքական ուժին հայ մարդն իբրեւ այլընտրանք է դիտում, ինչի համար եւ դուրս եկավ հրապարակ:

Ինչպես տեսնում եք, խոսքը ծրագրերի, գաղափարների մրցակցության մասին չէ, խոսքը հավատի ու վստահության մասին է:

Ապրիլի 26-ին Սիսիանում ջերմ ընդունելության արժանացած ՀԱԿ քարոզչական խումբը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, նույն օրը Գորիսում հանդիպումն անցկացրեց քիչ քանակությամբ մարդկանց հետ: Առաջին նախագահը զուգահեռ անցկացրեց Սիսիանի եւ Գորիսի հանդիպումների միջեւ ու Գորիսի վիճակը համարեց իբրեւ վախի արտահայտություն, ինչը, ըստ նրա, անսազական է նոր Հայաստանի հիմնադրման ակունքներում հպարտորեն կանգնած գորիսեցիների համար: Լեւոն Տեր-Պետրոսյանը, սակայն, չմասնակցեց հաջորդ օրը Կապանում եւ Մեղրիում կայացած հանդիպումներին, քանի որ մարզկենտրոնում նրա մոտ ճնշման տատանումներ արձանագրվեցին, եւ բժիշկների խորհրդով չշարունակեց հանդիպումներն ու վերադարձավ Երեւան: Սյունիքյան հանդիպումներում Լեւոն Տեր-Պետրոսյանը մի քանի անքննելի ճշմարտություն արձանագրեց: Ահա եւ դրանցից մեկը՝ **«Գողի, ավազակի, հանցագործի, երկիրը թալանողի ապաշխարությանը ես չեմ հավատում: Նման ապաշխարություններ կարող են լինել միայն գեղարվեստական գրականության եւ գեղարվեստական ֆիլմերի մեջ»:**

Խմբագրության մի շարք նախաձեռնություններ ձախողվեցին՝ կապված նախընտրական որոշ հարցերի պարզաբանման հետ: Փորձեցինք մարզի անձնագրային ծառայությունների պատասխանատուների հետ կլոր սեղան կազմակերպել եւ հնարավորինս պարզաբանել ընտրացուցակների ոդիսականը: Երեւանից նման հանդիպման թույլտվություն չստացանք: Հետեւաբար՝ չկարողացանք փոքր-ինչ չափով լույս սփռել հարցին, թե ինչո՞ւ եւ ինչպե՞ս ընտրողների թիվը (վերջին համապետական ընտրություններից հետո) աճեց նաեւ N37 ու N38 ընտրատարածքներում: Մեզ չհաջողվեց պարզաբանել (անգամ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանին հարցում հղելով), թե ինչպե՞ս է ստացվում, որ թեկնածուների կամ քաղաքական ուժերի մի մասը կարողանում է կրթական հաստատություններում նախընտրական հանդիպումներ ունենալ, մյուս մասը՝ ոչ: Մեզ չհաջողվեց պարզաբանել, թե ի՞նչ հունով է ընթանում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդներ Յորգան Բեքլունդի եւ Նիկոլայ Խոխլովի առաքելությունը, արդյո՞ք նրանց հավաքած տեղեկությունները հասանելի կլինեն մեզ մայիսի 6-ից հետո, թե, ինչպես նախկինում, կպահվեն՝ գաղտնի եւ կօգտագործվեն՝ քաղաքական իրավիճակից ելնելով՝ մեր երկրի վրա ճնշում գործադրելու համար:

Աղմկահարույց դեպքեր, էքսցեսներ՝ նախորդ տարիների համեմատությամբ, առայժմ Սյունիքում տեղ չեն գտել: Միաժամանակ, ամենուր լսում էինք եւ ենք վախի մթնոլորտի, ճնշումների, վարչական ռեսուրսի անթաքույց օգտագործման, ահաբեկումների, ընտրողների անձնագրերը հավաքելու, ընտրակաշառքի մասին, ինչը, սակայն, մարդիկ չեն ուզում հիմնավորել կոնկրետ փաստերով: N38 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Դավիթ Մաթեւոսյանն էր դիմումով ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել կոնկրետ փաստեր՝ այդ ընտրատարածքում մարդկանց վրա ճնշումներ գործադրելու մասին: «Ժառանգության» ներկայացուցիչ Զարուհի Փոստաջյանն էլ հայտարարել էր Գորիսում իրենց քարոզչական խմբին հետապնդելու, նախընտրական շտաբի ստեղծման հարցում առաջացած խոչընդոտների մասին:

ԲՀԿ-ի Սիսիանի կառույցի քարոզչական թիմն արգելքի էր հանդիպել՝ Սիսիանի դպրոցներ մտնելիս, ինչի համար դիմել էր ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին:

Ոստիկանության Գորիսի բաժնի պետ, գնդապետ Արմեն Հովհաննիսյանից մայիսի 1-ին տեղեկացանք, որ բաժնում հետաքննություն է սկսվել N37 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Թաքուլ Հակոբյանի քարոզչական պաստառները պատռելու փաստով:

Ահա այսպիսին են մեր տպավորությունները նախընտրական քարոզարշավից:

Առջեւում, ինչպես արդեն նշել ենք, դեռ մայիսի 6, քվեների հաշվարկ ու հետընտրական զարգացումներ կան…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՅԿ նախընտրական վերջին հավաքը Կապանում

®

ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Սկիզբը՝ էջ 2

հեռու պահել ցնցումներից եւ համաշխարհային ընկերակցության մեջ ապահովել հայոց պետության, հայ ժողովրդի արժանապատիվ տեղն ու դերը:

Տեղին եմ համարում հիշել՝ Սյունիքն է գաղափարական այն ակունքը, որից սկիզբ է առել Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Հենց այս փառապանծ ու դյուցազնական լեռնաշխարհում է խմորվել ու մարմին առել հայ ժողովրդի փրկության, հայ մարդու արժանապատվության պաշտպանության, հայ ոգու վերածնման նորօրյա գաղափարախոսությունը:

Անցած մի քանի տարին ցույց տվեց, որ Հայաստանի կառավարությունն աստիճանաբար, բայց հետեւողականորեն լուծում է Սյունիքի մարզի հիմնախնդիրները: Եվ դա մեզ համար հավելյալ հիմք է՝ ասելու, որ Սերժ Սարգսյանի գլխավորած Հանրապետականն է քաղաքական այն ուժը, որ կարող է առանց ցնցումների լուծել ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Սյունիքի մարզի հիմնախնդիրները:

Ուզում եմ եւս մեկ անգամ արտահայտվել մեր կուսակցության առաջադրած պատգամավորության երկու թեկնածուի մասին: Վահե Հակոբյանն ութ տարի շարունակ ձեզ հետ, ձեր աչքի առաջ է, եւ դուք ճանաչում եք նրան: Հայկ Գրիգորյանը նոր դեմք է մեր քաղաքական կյանքում: Նա իր մրցակիցների համեմատ ունի մի քանի էական առավելություն՝ ինտելեկտուալ է, անկեղծ է, անարատ է, երկրին ու հայ ժողովրդին անմնացորդ ծառայելուն պատրաստակամ է: Քվեարկելով նրանց օգտին, մենք կքվեարկենք փոփոխությունների օգտին, երկրի կայունության օգտին, մեր ժողովրդին արժանի օրենսդիր մարմին ունենալու օգտին:

Հայրենակիցներ

Հաշվված ժամեր են մեզ բաժանում մայիսի 6-ից: Ես կոչ եմ անում յուրաքանչյուրիդ եւ բոլորիդ՝ անպայման մասնակցել ընտրություններին:

Ուզում եմ, որ հիշեք՝ երկրի վաղվա օրը կախված է ձեզանից յուրաքանչյուրի կամքից ու ձայնից, յուրաքանչյուրի ողջամիտ դիրքորոշումից:

Մեր վստահության քվեն՝ Հայաստանի հանրապետական կուսակցությանն ու նրա թեկնածուներին:

Մեր վստահության քվեն ու զորակցությունը՝ Սերժ Սարգսյան առաջնորդին:

Հավատացնում եմ՝ հուսախաբ չեք լինի:

Բարի ընտրություններ բոլորիս:

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

Սյունյաց երկիր

ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Նշանավոր գերդաստանի արժանավոր ներկայացուցիչը

Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի 2012թ. փետրվարի 13-ի հրամանագրով Մոսկվայի «Կոնցեռն ՄոնԱրխ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն, մեր հայրենակից Արմեն Հովհաննեսի Ղուկասյանին «Շինարարության ոլորտում ձեռք բերած նվաճումների ու երկարատեւ, բարեխիղճ աշխատանքի համար» շնորհվել է Ռուսաստանի Դաշնության վաստակավոր շինարարի պատվավոր կոչում:

Արմեն Ղուկասյանը 37 տարի աշխատում է շինարարության բնագավառում:

Երեւանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շրջանավարտ է, ունի շինարարի մասնագիտություն: Աշխատանքային գործունեությունը սկսել է հայրենի եզերքում՝ «Քաջարանշին» տրեստի նախագծային-նախահաշվային խմբում՝ ինժեներ, աշխատել է նույն տրեստի N2 շինվարչությունում՝ աշխղեկ եւ գլխավոր աշխղեկ՝ N65 շինվարչությունում: 1980-96թթ. «Քաջարանշին» տրեստի դուստր բաժնետիրական ընկերության ինժեներն էր, ապա՝ գլխավոր ինժեները: 1993-96թթ. վերականգնել է ռազմական գործողությունների հետեւանքով ավերված շինությունները:

«Քաջարանշինում» աշխատելու տարիներին իրեն դրսեւորել է բարձրակարգ մասնագետ, նախաձեռնությունների հեղինակ, ընդունակ՝ օպերատիվորեն լուծելու շինարարական արտադրության եւ կառավարման մեջ բարդ հարցեր:

Ինչպես նշեցինք, «Քաջարանշինում» անցել է վարպետից մինչեւ գլխավոր ինժեներ ուղին: Եռանդուն մասնակցություն է ունեցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային եւ Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատների կառույցների եւ բնակելի տների, այդ թվում՝ «Բաղաբերդ» թաղամասի յուրահատուկ բնակելի զանգվածի, տպարանի եւ «Լեռնագործ» հյուրանոցի շինարարություններում:

1997-ին տեղափոխվել է Մոսկվա, որտեղ հանդիպել է Սերգեյ Համբարձումյանին, ում գիտեր դեռեւս դպրոցից եւ մտերմացել էր ուսանողական տարիներին:

● ● ●

Արմեն Ղուկասյանը ծնվել է Կապանում 1952թ. հոկտեմբերի 11-ին, Գյուտկում /Գեղանուշ/ գյուղացի Հովհաննես Ղուկասյանի ընտանիքում:

Ղուկասյանները ծագում են Ղարադաղի Միքեդի հայկական գյուղից, որը հայաբնակ մնաց մինչեւ անցյալ դարի 30-ականները, իսկ մեր օրերում արդեն աննշան մի բնակատեղի է՝ երբեմնի շեն ու բարեկարգ լինելու մասին իր լուռ վկաներով՝ շինությունների ավերակներ, կիսավեր եկեղեցի, գերեզմանատուն:

Ղուկասյանների մասին տեղեկանում ենք տոհմի կենսագիր Ասծատուր Ղուկասյանի՝ 1956թ. խնամքով գրված «Հիշատակարանից», որում ոչ միայն տոհմի պատմությունն է, նրա մարդիկ են իրենց գործերով ու ճակատագրերով, այլեւ մեզ անհայտ անուններ ու իրադարձություններ են, որ գալով լրացնելու եւ հարստացնելու են մեր երկրամասի մասին պատկերացումները:

Հավանաբար 1604 թվականին / բոլոր հաշվարկները դրան են հանգեցնում/՝ Շահ-Աբասի կողմից բռնագաղթի իրականացման ժամանակ իր ընտանիքով Միքեդիում է հաստատվում Ավլան անունով մի երիտասարդ, ում վիճակված էր լինել տոհմի նահապետը:

Սերնդեսերունդ փոխանցված զրույցներն Ավլանին ներկայացնում են որպես «վայելչակազմ, հաղթանդամ, բնատուր խելքի տեր ու մարդասեր»: Բայց գլխավորը, որ իմանում ենք «Հիշատակարանից», այն է, որ Ավլանն իր ժառանգների հիշողության մեջ մնաց շինարարական գործերով: Միքեդիում ու նրա շրջակայքում կառուցեց տներ, հասարակական շենքեր, աղբյուրներ /քյահրիզներ/, անցկացրեց ջրանցքներ, յուրացրեց վարելահողեր:

Այդ բոլորը նա իրականացրեց իր զավակների, ազգականների, համագյուղացիների հետ եւ կարողացավ Ղարադաղի այդ կողմերում հաստատված իր հայրենակիցների համար ապահովել ոչ միայն գոյատեւելու պայմաններ, այլ քիչ թե շատ բարեկեցիկ կյանք:

Իրանի իշխանություններն անտարբեր չգտնվեցին Ավլանի գործերի հանդեպ. շուտով նա մելիքի տիտղոսի արժանացավ եւ նշանակվեց շրջանի կառավարիչ:

Ավլանն իր կյանքն ավարտեց խոր ծերության մեջ՝ զավակներին ժառանգություն թողնելով մելիքական իշխանությունը եւ հարուստ տնտեսություն:

Կառուցել, քարը քարի վրա են դրել Մելիք Ավլանի սերունդները :

«Հիշատակարանն» է վկայում .

«Մելիք Ավլանի որդին՝ Մելիք Ասլանը, ոչ պակաս հարգանք էր վայելում ժողովրդի կողմից. կառուցող էր»:

«Մելիք Ասլանի որդին՝ Մելիք Ղարագյոզը՝ Սեւաչը, ում ժամանակ ավելի նկատելի եղավ առաջադիմությունը գավառում»:

«Մելիք Մինասը՝ Մելիք Ղարագյոզի որդին, որի ժամանակ ծաղկում ապրեցին Միքեդին եւ շրջակա գյուղերը: Նա իր գործերով հայտնի եղավ ոչ միայն Ղարադաղում, այլ Սյունիքում եւ Ղարաբաղում»:

Իրանում գոյություն չունեին բարեկարգ բնակավայրեր, վտանգված էին ճանապարհները, անսահման համարձակության հետ էր կապված Միքեդիով գնացող առեւտրական ուղիներով անցնելը: Բայց Մելիք Մինասին հաջողվեց Խուդափիրինի կամրջից Միքեդի տանող առեւտրական ճանապարհն ամբողջովին ապահով դարձնել եւ զսպել ավազակախմբերին: Առեւտրի, ազատ տեղաշարժի նկատմամբ մտահոգության ապացույցն է Միքեդիում նրա կառուցած իջեւանատունը:

Մելիք Մինասին հաջորդեցին երեք որդին՝ Ղազարը, Ղուկասը եւ Առաքելը, որոնց ապրած ժամանակը 19-րդ դարասկիզբն էր, երբ բռնկվեցին ռուս-պարսկական պատերազմները:

– Երբ ռուսներն անցան Արաքսը, մեր գերդաստանը հոգով ու սրտով նվիրվեց ռուսական բանակին: Պատճառները շատ էին: Տեղական թուրք խաները հանգստություն չէին տալիս մերոնց, եւ եղբայրները հարկադրված էին զինվոր, սուրհանդակ եւ բանակի մատակարար դառնալ ու իրենց կյանքը հայրենիքի զոհասեղանին դնել, - գրում է հիշատակարանի հեղինակը:

Պատերազմն ավարտվեց ռուսների հաղթանակով, կնքվեց Թուրքմենչայի դաշնագիրը, երկու երկրի միջեւ սահմանագիծ հաստատվեց Արաքսը՝ առաջ բերելով եղբայրների հիասթափությունը:

– Մնալ հայրենի եզերքում, հաշտվել իրականության հետ ու ենթարկվել պարսկական իշխանությունների անխուսափելի վրեժխնդրությա՞նը, թե՞ թողնել ու անցնել Արաքսը, փրկություն որոնել ռուսական տիրապետության ներքո, – մտորում էին եղբայրները:

Որոշում կայացնողը Ղուկասն էր /«Հիշատակարանը» Ղուկասին բնութագրում է բավական լակոնիկ՝ լրջախոհ/, որին եւ հնազանդվեցին եղբայրները:

Գաղթի ընդհանուր հրաման կար: Կարծես թե դժվար չէր լինի Արաքսի անցումը, սակայն եղբայրներին լավ էին ճանաչում որպես ռուսական ընդգծված կողմնորոշում ունեցողներ եւ մարտական գործողությունների մասնակիցներ: Շտապել էր պետք: Դիմեցին Թավրիզում ռուսական հյուպատոսությանը եւ ստացան բաղձալի անցագիրը:

1828թ. մայիսի 5-ին «Մելիք Մինասի որդիներ Ղազարին, Ղուկասին եւ Առաքելին տրված անցագիրը», որ պահպանվում էր դեռեւս 1960-ականներին Գեղանուշում, մեկ հրաշալի վկայություն է այս տոհմի մելիքական ծագման վերաբերյալ:

Արաքսն անցած գերդաստանի զավակները սփռվում են Ղափանի Շիկահող, Եղվարդ եւ Գյուտկում գյուղերում եւ միայն Եղվարդում հաստատվածներն էին, որ երկար ժամանակ ամուր կառչեցին իրենց մելիքական կոչումից եւ քաջ հայտնի են Մելիք–Ղարագյոզյան անունով /մեր օրերում Սեւաչյաններն են/, մյուսները նման նպատակ չհետապնդեցին, փոխարենը քարը քարի վրա դրեցին, այգիներ տնկեցին, վարելահողեր յուրացրին եւ, որ արժանահիշատակն է, անհաշտ ու անհանդուրժողական դիրք բռնեցին քոչվոր-խաշնարած ցեղերի հանդեպ՝ նրանց դուրս մղելով դեպի Խուստուփի արոտավայրերը տանող ճանապարհներից:

● ● ●

Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվելուց հետո Արմեն Ղուկասյանը 1996-2000թթ. աշխատանքի անցավ Մոսկվայի «Մոնարխ ԻՍ» ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր ինժեներ: Իսկ 2000-ի ընթացքում նույն ընկերության տեխնիկական տնօրենն էր:

Այդ տարիներին նրա անմիջական մասնակցությամբ Մոսկվայում կառուցվել եւ շահագործման է հանձնվել յոթ վարչական շենք 64300 քառ. մ մակերեսով, չորս բարձրահարկ մոնոլիտ բնակելի տուն 77850ք/մ մակերեսով: Իրականացվեց մարզական կառույցների շինարարություն 27800ք/մ մակերեսով, վերակառուցվեց Լուժնիկի մեծ մարզական համալիրը:

● ● ●

2000թ. նոյեմբերից մինչեւ 2010թ. սեպտեմբեր աշխատել է «Մոնարխ ԻՍ» ՓԲԸ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն:

Ուսումնասիրում է տարբեր երկրների շինարարական փորձը, իսկ կառուցածն իր որակով չի զիջում աշխարհի տարբեր երկրների կառույցներին, որոշ առումներով նույնիսկ գերազանցում է:

Իր հարցազրույցներից մեկում Ղուկասյանն ասել է. **«Գիտե՞ք ինչու է ինձ բոլորից շատ դուր գալիս դպրոց կառուցելը: Որովհետեւ հանձնելուց հետո նրանք անմիջապես լցվում են կյանքով, մանկական ծիծաղով եւ լուսավոր երազներով: Բնակելի շինարարության մեջ ամեն ինչ չէ այդպես.հանձնվում է տունը, ընթանում է բնակարանի աստիճանական յուրացում: Մարդիկ միանգամից չեն գալիս, իսկ այստեղ ...դպրոցները, որպես կանոն, հանձնվում են օգոստոսին եւ ընդամենը մի քանի օրից ապրում են լիարժեք , ուրախ եւ աղմկոտ: Այդ ուրախությունը ծածկում է բոլոր դժվարությունները եւ շինարարության ծախսերը»:**

2001-2010թթ. շահագործման է հանձնել 8 հանրակրթական դպրոց՝ 5870 աշակերտի համար: Իսկ N1529 գիմնազիան՝ վերակառուցված երբեմնի ավերակ դպրոցի տեղում, ոչ հեռու Քրիստոս Ամենափրկիչ տաճարից, «Ներդրումների եւ շինարարության բնագավառում լավագույն իրականացված ծրագիր» մրցույթում ճանաչվել է 2002թ. բացարձակ հաղթող բոլոր անվանակարգերով:

«Մենք կառուցում ենք երեխաների համար հոգով եւ կառուցում ենք այնպես, որ ապահովենք երեխաների անվտանգությունը», - ասում է շինարարը: Ղուկասյանը 1200 տեղանոց երկու դպրոցական շենք է կառուցել Բեսլանում՝ ահաբեկչությունից տուժած երեխաների համար, որի համար 2005թ. արժանացել է «Հյուսիսային Օսեթիա-Ալանիայի Հանրապետության արդյունաբերության վաստակավոր աշխատող» պատվավոր կոչման:

Ղուկասյանի անմիջական ղեկավարության ներքո շինվել են այնպիսի կարեւոր եւ եզակի կառույցներ, որոնք հաղթող են ճանաչվել մոսկովյան մրցույթում /N-1529 գիմնազիա, մոսկովյան քաղաքային դատարանի մասնաշենք, ՆԳՆ կենտրոնական շրջանի շենք/:

Այդ տարիներին նրա ղեկավարությամբ աշխատում էր մեկուկես հազար մարդ: Կառուցեց եւ շահագործման հանձնեց 580 հազար ք/մ մակերեսով 16 բարձրահարկ, որի շնորհիվ Մոսկվայում բնակարանային պայմանները բարելավեց հազար ընտանիք:

Շահագործման է հանձնել սոցիալական նշանակության 22 կառույց, ինչպիսիք են մանկական վնասվածքաբանական անհետաձգելի վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտը, բազմաֆունկցիոնալ համալիրներ, Մոսկվայի մանկավարժական համալսարանի ուսումնական մասնաշենքը, Մոսկվայի արբիտրաժային դատարանը, աշխարհում խոշորագույն ռազմական արվեստների կենտրոնը, Եվրոպայում խոշորագույն «Մեգասպորտ» մարզական սառցե պալատը Խոդինսկի դաշտում :

2004թ. մոսկովյան մրցույթում եւ REALTEX-2005 միջազգային ցուցահանդեսում հաղթող ճանաչվեց Սոլնցեւոյի դիմածնոտային արատներով եւ նյարդային համակարգի հիվանդություններով տառապող երեխաների բուժօգնության գիտապրակտիկ կենտրոնի համալիրը: 2010թ. հոկտեմբերից Ղուկասյանը «Կոնցեռն ՄոնԱրխ» բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենն է: Պահանջկոտ եւ հետեւողական շինարար է:

2011թ. շահագործման է հանձնել Մոսկվայի պլանետարիումը, Դաշնային գանձապետարանի վարչական շենքը, մանկապարտեզներ եւ այլ շինություններ:

Նրա ղեկավարությամբ աշխատում են ավելի քան 2500 բարձր որակավորում ունեցող բանվորներ եւ ինժեներատեխնիկական աշխատողներ: Աշխատակիցների միջին տարիքը երեսունհինգ է, շատ ինժեներներ Մոսկվայի պետական շինարարական համալսարանի ուսանողներ են: Նրան է վստահված բարդ եւ սոցիալական նշանակության այնպիսի կառույցների շինարարությունը, ինչպիսիք են Բոգորոդցկի բնակարանային վարչությունը, «Վնուկովո» օդակայանի «Վնուկովո-2» տերմինալի վերակառուցումը եւ ընդլայնումը, Ի.Գլազունովի տուն-թանգարանը, Ս.Անդրիյակիի արվեստների ակադեմիան, մանկապարտեզներ եւ մարզական -առողջարարական համալիրներ:

Շինարարություն է ընթանում 2014թ. ձմեռային օլիմպիադայի նախապատրաստման շրջանակներում՝ Սոչիի Օլիմպիական զբոսայգում:

Արմեն Ղուկասյանի ընտանիքը ճանաչված է Կապանում: Նրա պապը՝ Կոստանդը, ռուսական ցարական բանակի Դրագունյան գնդի ունտեր օֆիցեր է եղել, Առաջին աշխարհամարտում կռվել է Արեւելյան ռազմաճակատում, վիրավորվել է Լեհաստանում: 1919-21թթ. Լեռնահայաստանի պաշտպաններից էր: Հայրը՝ Հովհաննես Ղուկասյանը, երկրի իսկական քաղաքացի էր, ազնիվ մարդ, կրթությունը եւ լուսավորությունը գնահատող անձնավորություն: Երկրորդ աշխարհամարտի զինվորը պատերազմական ժամանակների բազմաթիվ զրկանքներից հետո՝ հայտնվելով Վիեննայում, հա-

Շարունակությունը՝ էջ 8

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԱԶԱՏԱՆԱՎԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ Ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 12 253
3 ՄԱՅԻՍԻ 2012

Նշանավոր գերդասպանի արժանավոր ներկայացուցիչը

ՍՅՈՒՆԵՅԻՆԵՐՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 7

մառորեն փնտրում է Մխիթարյան միաբանությունը, հանդիպում Համազասպ Ոսկյանին, նրանից գնում 1904թ. հրատարակության գրքեր, ոչ միայն դրանք ունենալու, այլ միաբանությանն օգնելու համար: Հովհաննես Ղուկասյանին ճանաչելու համար արժեր թերթել նրա հուշագրությունը /Հովհաննես Ղուկասյան, «Դարձ ի շրջանս յուր», Երեւան, 2007, «Զանգակ» հրատարակչություն/: Մայրը՝ Համեստ Ստեփանովնան, Կապանի N3 դպրոցի կենսաբանության երկարամյա ուսուցչուհին էր՝ սիրված եւ գնահատված դպրոցականների կողմից:

Արմեն Ղուկասյանն ամուսնացած է: Ունի երկու զավակ եւ երկու թոռ: Կինը՝ Իրան, երաժիշտ է, որդին՝ Արսենը, Մոսկվայի շինարարական համալսարանի շրջանավարտ է, կոնցեռնի ենթակառուցվածքներից մեկի գլխավոր տնօրենը, դուստրը՝ Համեստը, Մոսկվայի երկրորդ բժշկական ինստիտուտի շրջանավարտ է, բժշկուհի է:

«Կոնցեռն ՄոնԱրխ» ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահ Սերգեյ Համբարձումյանի գնահատականն է. **«Արմեն Ղուկասյանը նախապատվությունը տալիս է կառավարման առաջավոր մեթոդներին, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմանը, շինարարական գործընթացների եւ շինարարության որակի բարելավմանը, արտադրության կուլտուրային եւ աշխատանքի անվտանգությանը, շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխմանը»:**

Նա ուշադիր է նաեւ հայրենի եզերքի հանդեպ, նրա աջակցությամբ վերանորոգվել է Գեղանուշի Սբ Հռիփսիմե եկեղեցու տանիքը, պատվիրել է սրբապատկերներ, ձեռք բերել ծածկոցներ, հովանավորել է գրքերի տպագրություն: Զորավիգ է բազմաթիվ հայրենակիցների, ովքեր հարկադրված աշխատանք են որոնում Ռուսաստանի Դաշնությունում:

2005թ. օգոստոսին շինարարության զարգացման բնագավառում անձնական մեծ ներդրման համար արժանացել է «Ռուսաստանի պատվավոր շինարար» կոչմանը, արժանացել է «Տարվա ռուսաստանցի» կոչմանը եւ Ռուսաստանի բարձրագույն հասարակական պարգեւին՝ «Հանուն աշխատանքի եւ Հայրենիքի»՝ Սբ Ալեքսանդր Նեւսկու կրծքանշանի: 2006թ. կրկին արժանացել է «Տարվա ռուսաստանցի» մրցանակին:

Արմեն Ղուկասյանի մասին պատմող մի հրապարակման մեջ ասվում է, որ շինարարի մասնագիտությունը նրան տրված չէ ժառանգաբար: Ակներեւ է, որ այդպես չէ, ինչ վկայում է «Դարձ ի շրջանս յուր» հուշագրությունը. «Իմ պապ Հովհաննեսը՝ Վանին, ծնվել է 1840-ին: Պատշար էր, տներ է կառուցել եւ իր արհեստը սովորեցրել համագյուղացիներին»:

Կառուցելու, արարելու, ղեկավարելու /մելիքական ծագման վկայություն/ ձիրքը գալիս է հեռուներից, գուցե ավելի հեռվից, քան հայտնի է մեզ: Դա ժառանգել է որդին՝ Արսենը, անկասկած կփոխանցվի Արսենի Արմեն որդուն: Ու կշարունակեն կառուցել:

Եվ տա՛ Աստված, որ Ղուկասյանները, օտար ափերում արարող մեր համաերկրացիները մի օր առանց երկմտանքի վերադառնան ու կառուցեն հայրենիքում:

ԳՐԻՇԱ ՍՄԲԱՏՅԱՆ

Շաբաթը շնչում էր գրականությամբ

ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ-500

Կապանի քաղաքապետարանի ակումբագրադարանային միավորումն ակտիվ մասնակցություն ունեցավ ազգային գրադարանային շաբաթին, որն անցավ «Հայ գրատպություն-500» եւ «Երեւանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» խորագրերի ներքո: Մինաս Պապյան փողոցի գրադարանը շաբաթին արձագանքել էր «Գիրքը դարերի խորքից» խորագիրը կրող ցերեկույթով՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին: Ներկայացվեց հայ գրականության 500-ամյա ժառանգությունը, որ լուսավոր ուղի բացեց հայ ժողովրդի առջեւ: Դավիթ Բեկ թաղամասի ակումբ-գրադարանը կազմակերպել էր բեմականացված ցերեկույթ Գրիգոր Գեւունցի «Կետադրական նշանների խաղը» ստեղծագործության հիման վրա: Կապանի Բաղաբերդ թաղամասի գրադարանն իր կազմակերպած «Վարք Մաշտոցի» միջոցառմամբ անդրադարձել էր գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի1650-ամյակին: Իսկ Մուշեղ Հարությանյան թաղամասի գրադարանի միջոցառումը կրում էր «Հայ տպագրությունը 500 տարեկան է» խորագիրը, եւ ներկայացվեց հայ գրքի անցած ուղին՝ ստեղծման տարվանից մինչեւ մեր օրերը: Գրքերի աշխարհին ծանոթանալուն էր միտված Կապանի N8 նախադպրոցական ուսումնական հաստատության սաների այցելությունը Կապանի N1 մանկական գրադարան: Ապրիլի 22-ը հայտարարվել էր գրքի ընթերցանության օր, իսկ 23-ին ամփոփվեցին գրադարանային շաբաթվա արդյունքները:

ԶԱՐՎԱՐԴ ԾԱՏՐՅԱՆ

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ՝ Կապանում

ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՅՑ

2012թ. փետրվար ամսից Կապանում գործում է մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակ: 2011թ. նոյեմբերի 17-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) Կարեն Անդրեասյանը Կապանում՝ ՀԿ-ների, քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ նշել էր, որ առաջիկայում հեռավոր մարզերն էլ կունենան գրասենյակ: Ըստ Կ.Անդրեասյանի՝ մարդու իրավունքների պաշտպանը պետք է լինի ամենուր եւ բոլորին հասանելի: Մարդու իրավունքների պաշտպանի մարզային նոր գրասենյակ է բացվել նաեւ Եղեգնաձորում, Գյումրիում, Իջեւանում, Վանաձորում, Գավառում:

Կապանի գրասենյակում աշխատում է երկու իրավաբան՝ քրեական եւ քաղաքացիական իրավունքի մասնագետ ու մենեջեր: Գործում է նաեւ թեժ գիծ 116 հեռախոսահամարով, որով կարող է զանգահարել ամեն մի քաղաքացի եւ ներկայացնել իր խնդիրները: Կապանի մարզային գրասենյակն ակտիվ մասնակցություն է ունենալու նաեւ առաջիկա ընտրություններին, պաշտպանելու է այն քաղաքացիներին, որոնց իրավունքները կոտնահարվեն: **«Մենք արդեն ունենք 100 իրավաբան, ովքեր ակտիվ գործունեություն են ծավալելու ընտրությունների ժամանակ, արձագանքելու են բոլոր դիմումներին, որոնք կներկայացվեն գրասենյակներ»,** – ասաց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Նաիրա Կարմիրշալյանը: Մարզային գրասենյակներն ունենալու են նաեւ շրջիկ ավտոմեքենա, որպեսզի ահազանգի դեպքում գնան դրա հասցեով: Իսկ թե Կապանի գրասենյակը քանի մեքենա կունենա, Նաիրա Կարմիրշալյանն ասաց, որ դեռ պարզ չէ, քանի որ այդ հարցը կախված է ՄԻՊ-ի գործընկեր դոնոր կազմակերպություններից, որոնք կտրամադրեն այդ մեքենաները: Նորաբաց գրասենյակները շուտով ունենալու են բուկլետներ, որտեղ նշված են լինելու գրասենյակների հասցեները, հեռախոսահամարները:

Եթե մարդիկ տեղեկացված չեն, հետեւաբար պաշտպանված լինել չեն կարող: Դա է հիմնական դրդապատճառը, որ մարդու իրավունքների պաշտպանը գրասենյակներ ստեղծեց մարզերում: Մարզային գրասենյակների հիմնական խնդիրն այն է, որ բնակչությունն իրազեկված լինի, թե ինչ իրավասություններ ունի մարդու իրավունքների պաշտպանը, ինչ հարցերով կարող են նրան դիմել: Հուսանք, որ նորաբաց գրասենյակն ակտիվ գործունեություն կծավալի, կօգնի քաղաքացուն՝ տեր կանգնելու իր իրավունքներին:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Գորիսի քաղաքապետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետեւյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ՝				
	անվանումը եւ համարը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավարական կետ)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավարական կետ)	տեսակը (ավտոբուսային/միկրոավտոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.	Թիվ 1	Անկախության փ-ի թիվ 5 հասցեի հարակից տարածք	Անկախության փ-ի թիվ 5 հասցեի հարակից տարածք	միկրոավտոբուսային	2(1)
2.	Թիվ 2	Գուսան Աշոտի փ-ի թիվ 26 հասցեի հարակից տարածք	Գուսան Աշոտի փ-ի թիվ 26 հասցեի հարակից տարածք	միկրոավտոբուսային	2(1)

ՑԱՆԿ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Ընդհանուր օգտագործման ուղեւորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման եւ վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման եւ բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը եւ հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաեւ ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը եւ պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
11. Փակ ծրարով ներկայացվում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղեւորի եւ ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային եւ ներմարզային երթուղիների համար՝ նաեւ ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված եւ ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված եւ իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ եւ ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ եւ ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը. 18 հունիսի 2012թ. ժամը 11:00, ք. Գորիս, Անկախության փ. 3, Գորիսի քաղաքապետարանի շենք:

Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը: ք. Գորիս, Անկախության փ. 3, Գորիսի քաղաքապետարանի շենք, 4 մայիսի 2012 թվականի, երկուշաբթիից-ուրբաթ, ժամը 11:00-17:00, ընդմիջում՝ 13:00-14:00, վերջին ժամկետը՝ 11 հունիսի 2012թ. ժամը 17:00:

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար (0284) 2-25-52:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

Ի գ ի պ ո ւ թ յ ո ւ ն

Սյունիքի մարզի Ուժանիսի գյուղապետարանի կնիքը գտնվել է, ուստի մեր թերթի ս.թ. ապրիլի 25-ի համարում տպագրված հայտարարությունը՝ կնիքը կորելու մասին, համարել անվավեր:

Այունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱՋԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 02.05.2012թ.: